

With financial support of the Russian Federation



Empowered lives. Resilient nations.

ԾՐԱԳՐԻ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

Տարածաշրջանային ծրագիր՝ Հայաստան, Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան

ՄԱԿ-Ի ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ (ՄԱԶԾ)

Ծրագրի անվանումը՝ «Եվրասիական տնտեսական միության երկրներում էներգիայի արդյունավետության խթանման կարգավորող շրջանակ»

Ծրագրի ID: 00102117; **Շնորհման ID:** 00104290

Իրականացնող գործընկեր. ՄԱԶԾ

Մեկնարկի ամսաթիվ: Հոկտեմբեր 2017

Ավարտի ամսաթիվ: Հոկտեմբեր 2019

Համառոտ նկարագրություն

Տարածաշրջանային ծրագրի հիմնական նպատակն է էներգաարդյունավետության (ԷԱ) ազգային համակարգերի ներդրման հզորացման միջոցով նվազեցնել ջերմոցային գազերի (ԶԳ) արտանետումները Եվրասիական տնտեսական միության (ԵՏՄ) երկրներում, մասնավորապես, Հայաստանում, Ղրղզստանում, Ղազախստանում և Բելառուսում: Ծրագիրը նաև, ըստ անհրաժեշտության, կնպաստի ԵՏՄ երկրների փորձաքննության ընթացակարգերի, ստանդարտների և պիտակների ներդաշնակեցմանը: Գործընկեր երկրներում Ծրագիրը ամենաբարձր ազդեցության ժամանակ, նախատեսում է ծախսարդյունավետ կերպով հասնել բնակելի և առևտրային ոլորտներում էներգիայի սպառման կրճատմանը, միջինում 78 մլրդ կՎտժ, և արդյունքում՝ ջերմոցային գազերի նվազեցմանը համեմատած բազային սցենարի հետ, մինչև 2030թ. ընդհանուր ծավալով 43 մլն տոննա CO₂-ին համարժեք: Էներգաարդյունավետության ստանդարտների ներդրումը կնպաստի ընդհանուր շուկայի զարգացմանը, ներդրումների ներգրավմանը և վերջնական նպատակի իրագործմանը, այն է՝ ջերմոցային գազերի արտանետումների նվազեցմանը: Ծրագիրն այդպիսով կնպաստի նաև էկոլոգիապես կայուն և տնտեսապես արդյունավետ զարգացմանը: Ծրագիրը հիմնականում կենտրոնանալու է ԵՏՄ տարածաշրջանում կարողությունների ձևավորմանը և աջակցությանը կառավարություններին, ստանդարտացման ինստիտուտներին, արտադրության, բաշխման, մանրածախ առևտրի, սպառողների և շրջակա միջավայրի շահագրգիռ կողմերին՝ նպաստելով էներգախնայողության առավել հնարավոր ծախսարդյունավետ միջոցների կիրառմանը:

Ծրագիրը կդիտարկի յուրաքանչյուր մասնակից երկրի համեմատական առավելությունը, կիրականացվեն առաջնահերթ միջոցառումներ՝ յուրաքանչյուր երկրի կողմից ծրագրի իրականացման նախընտրելի գործընթացների խթանմանն օժանդակելու նպատակով:

Ծրագիրը կհիմնվի գործընկեր երկրներում ԷԱ ոլորտում ՄԱԶԾ-ի մի շարք նախկին և ընթացիկ գործողությունների վրա: Ծրագիրը նախատեսում է զգալի համագործակցություն Ռուսաստանի Դաշնության հետ, ինչպես տեխնիկական և խորհրդատվական աջակցության, այնպես էլ տեխնոլոգիաների փոխանցման առումով:

Պահանջվող ընդհանուր ռեսուրսներ՝	\$8,510,000	
Հատկացված ընդհանուր ռեսուրսներ՝	ՄԱԶԾ:	
	Ռուսաստանի Դաշնություն:	\$1,500,000
	Զուգահեռ ֆինանսավորում.	
	Ղազախստանի ՄԱԶԾ-ԳԷՖ ծրագիր	\$ 3,200,000
	Հայաստանի ՄԱԶԾ-ԳԷՖ ծրագիր	\$ 500,000

**Մասնակցային արդյունք
(ՄԱԿԶԱԾ/ԵԾԳՊ) .**

Մինչև 2020թ. ներդրված են և կիրառվում են կայուն զարգացման սկզբունքները և բնապահպանական կայուն զարգացման լավագույն փորձը, կլիմայի փոփոխության ադապտացումը և մեղմացումը և կանաչ տնտեսությունը:

Ցուցանիշային միջանկյալ արդյունք(ներ)՝ Ցածր ածխածնային և կանաչ տնտեսությունը կառավարության համար առաջնահերթություն են դառնում՝ հիմնվելով համապատասխան կարգավորող դաշտի և գործողությունների վրա:

Գենդերային մարկեր. GEN1

	Բելառուսի ՄԱԶԾ-ԳԷՖ ծրագիր	\$ 550,000
	Հայաստանի ՄԱԶԾ-ԿԿՀ ծրագիր	\$ 2,500,000
	Հայաստանի Հանրապետության կառավարություն (բնեղեն)	\$ 200,000
	Ղրղզստանի կառավարություն (բնաիրային եղանակով)	\$ 60,000

Իրականացնող գործակալությունը՝ ՄԱԶԾ

Ամսաթիվը՝

Բովանդակություն

I. ՆԱԽԱԳԻԾ 10.06.2017	Error! Bookmark not defined.
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	4
I. Զարգացման մարտահրավեր	4
II. Ռազմավարություն	7
III. Արդյունքները և գործընկերությունը	9
IV. Ծրագրի կառավարում	25
V. Ծրագրի տրամաբանական արդյունքների շրջանակ	28
VI. Մշտադիտարկում և գնահատում	35

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

LED	Լուսադիոդներ
ԱՀ	Ազգային հաղորդակցություն
ԱՂ	Առաջադրանքի ղեկավար
ԱՆ	Առաջադրանքի նկարագիր
ԲԷԱՍ	Բարձր էներգաարդյունավետության ստանդարտներ
ԳԷՖ	Գլոբալ էկոլոգիական ֆոնդ
ԳՀ	Գործադրման համայնք
ԵԱՀ	Եռամսյակային առաջընթացի հաշվետվություն
ԵԳ	Երկրի գրասենյակ
ԵԾԳՊ	Երկրի Ծրագրի գործողությունների պլան
ԵՏՄ	Եվրասիական տնտեսական միություն
ԷԱ	Էներգաարդյունավետության
ԷԱՆՍ	Էներգաարդյունավետության նվազագույն ստանդարտներ
ԷԽ և ԷԱ	Էներգախնայողություն և Էներգաարդյունավետություն
ԾԱՀ	Ծրագրի արդյունքների հանձնաժողով
ԾՀԿ	Ծրագրի համակարգման կոմիտե
ԿՁՆ	Կայուն զարգացման նպատակներ
ԿՓ	Կլիմայի փոփոխություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետության
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՄԱԿ	Միավորված Ազգերի Կազմակերպություն
ՄԱԿԶԱԾ	Միավորված ազգերի կազմակերպության զարգացման աջակցության շրջանակ
ՄԳ	Մշտադիտարկում և գնահատում
ՆԳՊ	Նորմալ գործունեության պայմաններ
ՈԻԻԵ	Ուղղակի իրականացման եղանակ
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՋԳ	Ջերմոցային գազեր
ՌԴ	Ռուսաստանի Դաշնություն
ՍՀՕՀ	Ստանդարտ հիմնական օժանդակության համաձայնագիր
ՏԱՀ	Տարեկան առաջընթացի հաշվետվություն
ՏԱՊ	Տարեկան աշխատանքային պլան
ՏԾՀԿ	Տարածաշրջանային ծրագրի համակարգող կոմիտե
ՏՀԲ	Տարածաշրջանային համակարգման բաժին
ՓԲԸ	Փակ բաժնետիրական ընկերություն

I. ԶԱՐԳԱՅՄԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ

Համաձայն ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիայի շրջանակներում ստորագրված Փարիզի համաձայնագրի, որն ընդունվել է 21-րդ համաժողովի ժամանակ և գործողության մեջ է դրվել 2016թ. նոյեմբերի 4-ին, որոշվել է իրականացնել գործողություններ սահմանափակելու Երկրագնդի օդի միջին ջերմաստիճանի բարձրացումը նախաարդյունաբերական մակարդակից 2°C-ի սահմաններում, միևնույն ժամանակ փորձելով հասնել ավելի դանդաղ աճի մակարդակի՝ մինչև 1,5°C: Ներկայումս 190 երկրներ ներկայացրել են ջերմոցային գազերի (ՋԳ) արտանետումների կրճատման իրենց ազգային ծրագրերը և համաձայնվել են վերանայել իրենց պարտավորությունները յուրաքանչյուր հինգ տարին մեկ՝ սկսած 2018 թ., հիմնվելով կիրառելի գիտական ձեռքբերումների վրա: Փարիզյան համաձայնագիրը նաև սահմանում է տեխնիկական և ֆինանսական ներդրումների ընդհանուր սկզբունքները և մեխանիզմները՝ ուղղված ցածր ածխածնի հիմունքներով զարգացման քաղաքականությանը և կլիմայի փոփոխության հանդեպ կայունության բարձրացման գործընթացների օժանդակությանը:

Քաղաքային՝ ԵՏՄ երկրներում էներգիայի ընդհանուր սպառումը տարեկան կազմում է մոտ 130 մլրդ կՎտժ: Լուսավորության, կենցաղային տեխնիկայի և շենքերի ինժեներական ենթակառուցվածքների կողմից էներգիայի սպառումը տարեկան կազմում է մոտ 30% կամ 39 մլրդ կՎտժ: Տարվա կտրվածքով 2-3% տնտեսական աճի սցենարի համաձայն, ԵՏՄ երկրներում էլեկտրաէներգիայի սպառումը 2017թ. տարեկան 130 մլրդ կՎտժ-ից կավելանա մինչև տարեկան 150 մլրդ կՎտժ՝ 2030թ. դրությամբ: Էներգաարդյունավետ տեխնոլոգիաների փոխանցումը և կիրառումը կարող է ապահովել էներգիայի սպառման մինչև 40% կամ տարեկան 15.6 մլրդ կՎտժ կրճատում, ինչը հավասարազոր է տարեկան մոտ 9 մլն տոննա CO₂-ին համարժեք արտանետումների: Այս ներուժի իրացումը կարող է ապահովել կայուն տնտեսական աճ՝ առանց արտադրող հզորությունների զգալի աճի: Ներկայիս ներուժի 50% -ը կարող է իրագործվել մինչև 2030թ. էներգաարդյունավետության արդի ստանդարտների ներդրման շնորհիվ:

Տարածաշրջանային համադրեք: Էներգախնայողությունը, որը ԵՏՄ-ում անվանվում է «Ապագայի արդյունաբերություն», սահմանված է որպես տարածաշրջանում ինտեգրացիոն մարտահրավերների և կլիմայի փոփոխության մեղմացման քաղաքականության իրականացման առաջնահերթություն: Գործընկեր երկրներում էներգիայի արդյունավետ օգտագործման ընդհանուր պահանջների ներդրումը խթան կհանդիսանա էներգախնայող արտադրանքի արտադրության ոլորտների համար և պայմաններ կստեղծի շուկայում դրանց առաջխաղացման համար: Սպառողների իրավունքների պաշտպանությունը կարող է ապահովվել միասնական շուկայի էներգախնայող ապրանքների որակի կառավարման համակարգի ստեղծման միջոցով, ինչպես նաև անհրաժեշտ ինստիտուցիոնալ ենթակառուցվածքների, օրինակ՝ փորձաքննական լաբորատորիաների, կառուցման հետ կապված ծախսերի օպտիմալացման միջոցով: ԵՏՄ-ում տարածաշրջանային նախաձեռնությունը հարթակ կապահովի գործընկեր երկրների ընդհանուր տեղեկատվության փոխանակման, գործիքների և վերապատրաստման համար՝ կենտրոնանալով ԷԱ ստանդարտների ներդաշնակեցման և հավաստման միջոցների և ընթացակարգերի գծով տարածաշրջանային համագործակցության վրա: Լուսավորության, կենցաղային տեխնիկայի և ինժեներական սարքավորումների էներգաարդյունավետության խթանման մասով ԷԱՆՍ և ԲԷԱՍ ներդրման հետ կապված ՌԴ-ի փորձը բավականին հաջող էր: ՌԴ-ում ԷԱՆՍ ներդրումը լուսավորության ոլորտում և LED տեխնոլոգիաների կիրառման խթանման միջոցով ապահովվել է 5 մլն տ CO₂ համարժեք արտանետումների կրճատում տարեկան:

ԵՏՄ երկրները արդեն սկսել են ընդհանուր քաղաքականություն սահմանել էներգախնայողության տեխնիկական կարգավորման ոլորտում, մասնավորապես, մի քանի տարի առաջ մշակվել է էներգախնայող արտադրանքի էներգաարդյունավետության պահանջների տեխնիկական կանոնակարգի նախագիծը: Ցավոք, Տեխնիկական կանոնակարգի ընդունումը հետաձգվել է

որոշ երկրներում առկա պահանջների քանակի և անհրաժեշտ ենթակառուցվածքների (լաբորատորիաներ, փորձագետներ, էներգաարդյունավետության վերահսկման համակարգեր) բացակայության պատճառով: Ներկայումս տեխնիկական կանոնակարգի նախագիծը թարմացման կարիք ունի, ավելին, այն չի անդրադառնում որոշ կարևոր էներգասպառող ապրանքների (օրինակ՝ բոլոր տեսակի լուսամոնիթորները): Փաստաթղթի վերանայումն ու թարմացումը գրեթե անհնար է իրագործել առանց ԵՏՄ երկրների մասնագիտական համայնքի աջակցության: Անհրաժեշտ է նաև ապահովել ԲԷԱՍ համակարգի զարգացումը և դրանց ներդրումը ազգային մակարդակով (օրինակ՝ պետական գնումների կարգավորման համար)՝ այդպիսով ապահովելով ԷԱՆՍ - ի աստիճանական աճի գործնական կիրառությունը: Օրինակ, տեխնիկական կանոնակարգի բացակայության պայմաններում ՌԴ և Ղազախստանը մշակել և ընդունել են էներգաարդյունավետության պահանջներ՝ պետական կարիքների համար լուսավորող սարքավորումների ձեռքբերման համար: Այս չափանիշները ավելի խիստ են, քան տեխնիկական կանոնակարգի նախագծում ներկայացված պահանջները: Հայաստանը նույնպես մշակել է լուսավորության ազգային էներգաարդյունավետության պահանջներին անդրադարձող նախագիծ և ստեղծել լուսավորման սարքավորումների փորձաքննական լաբորատորիա: Հայաստանի կառավարության կողմից 2017 թվականի փետրվարի 2-ի թիվ 4 արձանագրային որոշմամբ ընդունված 2-րդ էներգախնայողության գործողությունների ազգային ծրագիրը սահմանում է էներգաարդյունավետության բարձրացման ոլորտները և միջոցառումները, ինչպես նաև յուրաքանչյուր հատվածի համար էներգիայի սպառման նվազեցման կանխատեսումները, ներառյալ, էներգաարդյունավետության ստանդարտների ներդրման և սպառողների շրջանում պիտակավորման վերաբերյալ իրազեկվածության բարձրացման միջոցով: Ղրղզստանում էներգախնայողության և էներգաարդյունավետության հարցերը կարգավորվում են «էներգախնայողության մասին» և «Շենքերի էներգախնայողության մասին» օրենքներով, որոնք նախատեսում են էներգախնայողության և էներգաարդյունավետության քաղաքականության խթանման կազմակերպչական միջոցառումներ: Մշակվել է 2015-2017թթ. էներգախնայողության և էներգախնայողության քաղաքականության պլանավորման ծրագիրը (Ղրղզստանի կառավարության 2015թ. օգոստոսի 25-ի թիվ 601 որոշումը), որը նախատեսում է էներգաարդյունավետության և էներգախնայողության քաղաքականության խթանման կազմակերպչական միջոցառումներ: Վերջին մի քանի տարիների ընթացքում, ըստ Բիշքեկի 2012-2014թթ. Սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի, արդեն իսկ մեկնարկել են աշխատանքները Բիշքեկ և Օշ քաղաքների լուսավորության համակարգերի ընտրված հատվածների էներգաարդյունավետ արդիականացման ուղղությամբ: Այնուամենայնիվ, շենքերի լուսավորման, կենցաղային և ինժեներական սարքավորումների էներգաարդյունավետության լիարժեք խթանման համար համապատասխան չափանիշներ և կանոններ չկան: Այս խնդիրը կարող է լուծվել ազգային կարգավորման և մշտադիտարկման համակարգի ստեղծման, էներգաարդյունավետության ցուցանիշների համակարգի զարգացման միջոցով, այս ոլորտում հաջող փորձագիտական փորձի արդյունքների վերաբերյալ լայն տեղեկատվության մշակմամբ, այդ թվում՝ ԵՏՄ երկրներում:

Խոչընդոտներ. Կան բազմաթիվ խոչընդոտներ էներգախնայող սարքերի ներքին ազգային շուկաներ մուտք գործելու համար՝ տարբեր կանոնակարգերի համատեքստում: Այս խոչընդոտները կարող են վերացվել ընդհանուր ստանդարտների ներդրմամբ:

Շինարարության աճը և գոյություն ունեցող շենքերի վերակառուցումը, ինչպես նաև գնողունակության աճը հանգեցրեց կենցաղային տեխնիկայի արդիականացումը, որը բերեց նշված երկրներում էլեկտրաէներգիայի սպառման աստիճանական ավելացմանը (90-ական թվականների վերջ), ինչը հանգեցրեց աղտոտիչների, ներառյալ CO₂ և սնդիկի արտանետումների բարձր մակարդակի:

Անարդյունավետ տեխնիկական գերակշռում է շուկայի բոլոր հատվածներում, իսկ անարդյունավետ արտադրանքի մասնաբաժինը զգալիորեն բարձր է ԵՄ միջինից: Սա հիմնականում պայմանավորված է սպառողների ցածր իրազեկվածությամբ և/կամ տեղեկատվության բացակայությամբ

կամ դրա ոչ պատշաճ տրամադրմամբ, ինչը չի ապահովում շուկայի փոխակերպման համապատասխան ազդանշաններ ստանալը: Էներգակիրների գների բարձրացման բացասական ազդեցությունը կարող է մեղմվել համապատասխան գիտելիքների շնորհիվ, որոնք կկիրառվեն տնային տնտեսությունների և առևտրային հատվածի օգտագործողների կողմից էներգասպառող սարքերի ընտրություն կատարելիս: Շուկայում առկա լուսավորող սարքերի, կենցաղային տեխնիկայի և ինժեներական սարքավորումների մեծամասնությունը էներգաարդյունավետության ցածր դասի է պատկանում և համապատասխանաբար, ունեն ցածր էներգաարդյունավետություն: Այս իրավիճակը չի նպաստում նոր տեխնոլոգիաների զանգվածային ներդրմանը և հետևաբար դանդաղեցնում է տարածաշրջանի երկրներում էներգաարդյունավետության բարելավումը: Ընդ որում, չկա պետական և համայնքային ոլորտներում կանաչ գնումների խթանման միասնական մոտեցում՝ հիմնված էներգասպառող ապրանքների և համակարգերի ընտրված խմբերի համար պարտադիր էներգաարդյունավետության պահանջների վրա:

Հնարավորությունները. Միևնույն ժամանակ էներգաարդյունավետության բարձրացման և էներգասպառող սարքերի հիմնական մասի (LED լամպերի և լուսատուների, սառնարանների, վացքի մեքենաների և այլն) գների նվազման ներկա միտումները ստեղծում է էներգախնայողության համար զգալի տեխնիկական կարողություն (մինչև 40%): Տնտեսական գործունեության ոլորտների մեծ մասում այս ներուժը չի իրականացվում՝ էներգախնայող արտադրանքի համար անհրաժեշտ պահանջարկի բացակայության կամ պահանջարկի խթանման մեխանիզմի բացակայության պատճառով:

Ընդհանուր առմամբ կենցաղային տեխնիկայի համար ԷԱ ստանդարտները հայտնի են ԵՏՄ երկրներում և այդ երկրների մի մասն արդեն սկսել են մշակել և իրականացնել համապատասխան ծրագրեր, սակայն շուկայում ապրանքի միջին արդյունավետությունը դեռևս շատ ցածր է առավել արդյունավետ ապրանքների համեմատ: Ծրագրերը կարիք ունեն որոշակի գործողությունների սինխրոնացման, միաժամանակ նպաստելով գործընկեր երկրների ֆինանսական և ինստիտուցիոնալ թերությունների նվազեցմանը:

Մոտիվացիայի և նորարարության համար բարենպաստ միջավայրի ստեղծումը չափազանց կարևոր են կլիմայի փոփոխության արդյունավետ երկարաժամկետ գլոբալ մեղմացման, տնտեսական աճի և կայուն զարգացման համար:

Այլ հարակից օգուտները՝ Էներգախնայողությունը նաև կնպաստի սնդիկի արտանետման նվազեցմանը: Համաձայն Մինամատայի կոնվենցիայի դրույթների, որը կարգավորում է սնդիկի օգտագործումը և սահմանում է թունավոր նյութերի փուլային վերացման պարտավորություն, հուսալի հիմքեր են ձևավորվում սնդիկ պարունակող ցածր արդյունավետության արտադրանքի (յլումինեսցենտային և սնդիկային լամպերի) արտադրությունից և շրջանառությունից հանելու համար:

II. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ծրագիրը կնպաստի կայուն զարգացման ոլորտում հետևյալ նպատակներին հասնելու համար. Նպատակ 7: Ապահովել հուսալի, կայուն և ժամանակակից էներգիայի արտադրության հասանելիություն բոլորի համար (Նպատակ 7.3: Մինչև 2030թ. էներգաարդյունավետության ցուցանիշի կրկնակի բարելավում համաշխարհային մակարդակով): Նպատակ 13: Կլիմայի փոփոխության և դրա ազդեցության դեմ պայքարի ուղղությամբ անմիջական գործողությունների ձեռնարկում (Նպատակ 13.2: Կլիմայի փոփոխության հետ կապված միջոցառումների ինտեգրում ազգային քաղաքականության, ռազմավարության և պլանավորման մեջ, և Նպատակ 13.3: Կլիմայի փոփոխության ազդեցության մեղման ուղղությամբ կրթության, իրազեկման և մարդկային և ինստիտուցիոնալ կարողությունների մակարդակի բարելավում):

Ծրագրի հիմնական նպատակն է լուսավորության, կենցաղային տեխնիկայի և շինությունների ինժեներական սարքավորումների էներգախնայողության ներուժի իրականացումը՝ էներգաարդյունավետության ժամանակակից ստանդարտների ներդրման միջոցով:

Այդ նպատակին հասնելու համար Ծրագիրը կիրականացնի համալիր միջոցառումներ ՌԴ-ում ՄԱԶԾ-ԳԷՀ-ի ծրագրերի իրականացման ընթացքում ձեռք բերված փորձի, ինչպես նաև միջազգային լավագույն փորձի հիման վրա: Նախագծի՝ փոփոխության տեսության ([Հավելված 1](#)) համաձայն, միջոցառումները կներառեն.

- Լուսավորության, կենցաղային տեխնիկայի և շենքերի ինժեներական սարքավորումների էներգաարդյունավետության ժամանակակից նորմերի մշակումը և ներդրումը,
- Փորձարկման լաբորատորիաների համակարգի ստեղծումը և ցածր արդյունավետության սարքավորումներից շուկան պաշտպանելու միջոցառումների իրականացումը,
- Սպառողների իրազեկության բարձրացումը էներգախնայող տեխնոլոգիաների հնարավորությունների և օգուտների վերաբերյալ, ջերմոցային գազերի արտանետումների կրճատման գնահատումը:

Փորձարկման լաբորատորիաների և համապատասխան սպառողների տեղեկատվական համակարգերի հետ միասին էներգիայի արդյունավետության պահանջները (էներգաարդյունավետության նվազագույն ստանդարտները (ԷԱՆՍ) և բարձր էներգաարդյունավետության ստանդարտները (ԲԷԱՍ) ներդրած երկրների փորձը վկայում է, որ Ծրագրի նպատակները հասանելի են: Նախատեսվում է ներդնել նորմատիվային բազա (ԷԱՆՍ, շինարարական նորմեր և կանոններ, ստանդարտներ և փորձաքննական մեթոդներ), օգտագործելով ՌԴ-ում էներգախնայող տեխնոլոգիաների ներդրման և փորձարկման լաբորատորիաների ներդրման փորձը և հետագայում փոխանցել դրանք ԵՏՄ-ի մյուս երկրներին: ԷԱՆՍ և ԲԷԱՍ մեխանիզմների զարգացմանը կնպաստի ԵՏՄ-ի տարբեր երկրների փորձագետների միջև երկխոսությունը: ՄԱԶԾ-ի երկարաժամկետ համագործակցության արդյունքում կառուցված էներգետիկ արդյունավետության ոլորտում կառավարությունների և մասնավոր հատվածի հետ աշխատանքային հարաբերությունները կնպաստեն այս ոլորտում ՄԱԶԾ-ի հանդեպ ավելի բարձր վստահության ձևավորմանը:

ԵՏՄ-ն արդեն սկսել է ընդհանուր քաղաքականություն մշակել էներգախնայողության տեխնիկական կարգավորման ոլորտում, մասնավորապես, մի քանի տարի առաջ մշակվել է էներգախնայող արտադրանքի էներգաարդյունավետության պահանջների տեխնիկական կանոնակարգի նախագիծ: Ծրագիրը համագործակցելու է Ղազախստանի կառավարության և մասնավոր հատվածի հետ՝ ՄԱԶԾ-ԳԷՀ-ի «էներգախնայողության ստանդարտներ, սերտիֆիկացում և սարքավորումների և տեխնիկայի պիտակավորում Ղազախստանում» ծրագրի միջոցով: Հայաստանում ծրագիրը կհամագործակցի ՄԱԶԾ-ԳԷՀ-ի «Կանաչ քաղաքային լուսավորություն» և ՄԱԶԾ-ի «Կլիմայի կանաչ հիմնադրամի» հետ՝ շենքերի էներգաարդյունավետության ուղղությամբ:

Բելառուսում Ծրագիրը համագործակցելու է Ստանդարտացման պետական կոմիտեի և «Բելառուսի փոքր և միջին քաղաքներում կանաչ քաղաքների զարգացմանն աջակցություն» ՄԱԶԾ-ԳԷՀ ծրագրի հետ:

Ղրղզստանում, Ծրագիրը համագործակցելու է Ղրղզստանի էկոնոմիկայի նախարարության Ստանդարտացման և չափագիտության կենտրոնի հետ:

ՄԱԶԾ-ի վերոհիշյալ ծրագրերի միջև փոխշահավետ համագործակցությունն ապահովելու է սիներգետիկ ազդեցություն՝ տարածաշրջանում էներգաարդյունավետության բարելավման ընդհանուր նպատակներին հասնելու ուղղությամբ, ինչպես նաև ընդլայնելու է իրականացվող միջոցառումների շրջանակը և լուսաբանումը: Ծրագրի համատեղ աշխատանքները կապահովեն հավատարմագրային ֆոնդի ռեսուրսների արդյունավետ օգտագործումը:

Հավելյալ արժեքի վերլուծություն

Ընդհանուր զարգացման նպատակներ

ԵՏՄ երկրները էներգիայի պահպանումն ու էներգաարդյունավետությունը (ԷՊ և ԷԱ) դիտարկում են որպես իրենց ազգային էներգետիկ նպատակներին հասնելու ծախսարդյունավետ միջոցներ: Այդ միջոցառումների շարքում է ԷԱ ստանդարտների և պիտակավորման ծրագրերի իրականացումը: Նման ծրագրերը հնարավորություն ունեն ապահովելու էներգաարդյունավետ արտադրանքի տարբեր դասերի համար շուկայի ամբողջական վերափոխումների ցիկլը՝ նոր էներգամատակարարման ապահովման գնից զգալիորեն ցածր ծախսատարությամբ:

ԷԱ ստանդարտները և պիտակավորման ծրագրերը նպաստում են Կայուն զարգացման նպատակների իրականացմանը, մասնավորապես, ԿՁՆ 7-ի, և 13-ի, որոնցով ծրագիրը ուղղակիորեն և անուղղակիորեն կարող է նպաստել աղքատության մեղմացմանը, բարելավել բնապահպանական կայունությունը երկրի և/կամ տարածաշրջանի զարգացման ճանապարհին և օգնել բարելավել առևտրային կապերը և մշակել տարածաշրջանային գործընկերություն՝ զարգացման ուղղությամբ: ԵՏՄ-ում ԷԽ և Լ ծրագրերի իրականացման համար խթանիչ պատճառները, մասնավորապես հետևյալն են.

- երկրներում էլեկտրաէներգիայի օգտագործման աճի կրճատումը,
- էլեկտրաէներգիայի հաշիվների նվազեցումը, որը թույլ է տալիս սպառողներին և ընկերություններին օգտագործել խնայված միջոցները տեղական ապրանքներ և ծառայություններ ձեռք բերելու համար,
- Բարելավել ԵՏՄ երկրներում արտադրվող ապրանքները, ապահովելով դրանց ավելի բարձր մրցունակությունը շուկայում:

Գլոբալ բնապահպանական նպատակ

ԷԱ ստանդարտները և պիտակավորման ծրագրերը քաղաքականության և ԵԽ/ԷԱ միջոցառումների առավել ծախսարդյունավետ տեսակներից են կլիմայի գլոբալ փոփոխության դեմ պայքարի տեսանկյունից: Նման ծրագրերը հնարավորություն ունեն ապահովելու էներգասպառող սարքերի/սարքավորումների շուկան՝ նոր էներգամատակարարման ապահովման գնից զգալիորեն ցածր ծախսատարությամբ: Էներգաարդյունավետ արտադրանքի լայնածավալ օգտագործմամբ կարող են կրճատվել ՋԳ արտանետումները ԵՏՄ երկրներում ջերմային էլեկտրաէներգիայի արտադրության ընթացքում: Ծրագրի նպատակն է մասնակից երկրներում ընդհանուր ստանդարտներին համապատասխանության ստուգման համակարգերի ծախսարդյունավետ մշակումը: Ծրագրի նպատակի իրագործումը բաղկացած կլինի 3 հիմնական բաղադրիչներից, որոնցից յուրաքանչյուրը կոնկրետ ծրագիր է, որով նախատեսված են սահմանված արգելքները հաղթահարելուն ուղղված առանձնահատուկ գործողություններ:

III. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Նախագծի վերջնական նպատակը լուսավորության, կենցաղային տեխնիկայի և շինարարական ինժեներական սարքավորումների էներգիայի սպառման կրճատումն է, էներգիայի արդյունավետության արդիական նորագույն ստանդարտների ներդրման միջոցով, ինչը նախատեսվում է իրագործել երեք փոխկապակցված բաղադրիչների միջոցով: Ընդհանուր առմամբ այս բաղադրիչները ապահովվելու են կարգավորիչ, տեխնիկական և շուկայական գործիքների ներդրմա միջոցով՝ սպառողների իրազեկման բարձրացմանն ուղղված գործիքների հետ միասին:

Արդյունք 1. Լուսավորության, կենցաղային տեխնիկայի և շենքերի ինժեներական սարքավորումների էներգաարդյունավետության վերաբերյալ ժամանակակից ստանդարտների մշակում և ներդրում:

Գործողություն 1.1. Էներգաարդյունավետության ստանդարտների մշակման և էներգաարդյունավետ տեխնոլոգիաների խթանման ուղղությամբ փորձաշրջանային փորձագիտական հարթակի ստեղծում և գործարկում ԵՏՄ երկրներում:

Էներգաարդյունավետ սարքերի տարածման և օգտագործման խթանմանն ուղղված առաջին առաջադրանքը առաջատար արտադրողների, արդյունաբերական ասոցիացիաների, փորձարկման լաբորատորիաների և համապատասխան գիտական և տեխնիկական հաստատությունների միջև երկխոսության կազմակերպումն է: Այս առաջադրանքը կկատարվի խորհրդակցական հարթակի միջոցով, որում կներգրավվեն փորձագետներ և շուկայի մասնակիցների ներկայացուցիչներ: Նման կոլեգիալ մարմնի ներկայությունը թույլ կտա մեզ ուսումնասիրել, հասկանալ և համակարգված ձևով արձագանքել ծրագրի իրականացման ընթացքում ծագող հնարավոր դժվարություններին: Հարթակը չի ունենալու պաշտոնական լիազորություններ, այլ ծառայելու է որպես խորհրդատվական կառույց և կոլեգիալ մարմին, էներգաարդյունավետության հարցերի կարգավորման փոխըմբռնման և փոխհամաձայնության հասնելու ուղղությամբ: Ծրագրի աշխատակիցները կօժանդակեն հանդիպումների կազմակերպմանը (տեղական/արտասահմանյան) հարթակներում, ինչպես նաև տեղեկատվության կտրամադրեն փորձագետների և հարթակի մասնակիցների համար: Յուրաքանչյուր երկրում նախագծի շրջանակներում կստեղծվի փորձագետների աշխատանքային խումբ՝ համապատասխան պետական գործակալությունում կամ հաստատությունում, որը կպատրաստի էներգաարդյունավետության պահանջների ներդաշնակության և համապատասխան ստանդարտները վերաբերյալ տեղեկատվությունը (օրակարգը)՝ հարթակում քննարկելու համար:

Այս հարթակը հնարավորություն կընձեռի փոխադարձ պատկերացում կազմելու ԷԱՆՍ/ԲԷԱՍ-ների, ստանդարտների և փորձարկման մեթոդոլոգիաների ու էներգախնայողության տեխնոլոգիաների առաջխաղացման հարցերի վերաբերյալ: Նախատեսվում է հարթակը ստեղծել այնպիսի կազմակերպության հիմքի վրա, որը չի հետապնդում առևտրային շահ որոշ ապրանքների տեսակների խթանման համար և հավասար դիրքորոշում ունի շուկայի բոլոր մասնակիցների համար: Հարթակի գործունեությունը կներառի բոլոր շահագրգիռ կողմերի ներկայացուցիչների հետ աշխատանքային խմբերի ձևավորումը. աշխատանքային խմբերը կհամագործակցեն այնպիսի առանցքային հիմնահարցերում, ինչպիսիք են ԷԱՆՍ և ԲԷԱՍ թվային արժեքները, փորձարկման մեթոդները, սերտիֆիկացման սխեմաները, տնտեսական ասպեկտները և ֆինանսական խթանները և այլն: Հարթակը, երկրների պահանջով, կմշակի էներգաարդյունավետության պահանջներ, կօժանդակի հասարակական լուսմաների անցկացմանը մասնագիտական հանրության ներկայացուցիչների շրջանում, կնպաստի երկրների դիրքորոշումների համակարգմանը էներգախնայող սարքավորումների տարբեր տեսակների շուկայական կարգավորման հարցերի շուրջ, և կկատարի ստանդարտներում անհրաժեշտ ճշգրտումներ՝ փորձագետների ներգրավմամբ: Ակնկալվում է, որ հարթակը կշարունակի իր աշխատանքը նաև Ծրագրի ավարտից հետո:

Համակարգված պետական կարգավորումը և գիտելիքների և փորձի փոխանակումը առանցքային է բոլոր պետությունների համար, և այդ առումով ՌԴ-ի հետ փորձի փոխանակումը թույլ կտա գտնել նշված խնդիրների լուծումը և կբարելավի ինտեգրացիոն գործընթացի արդյունավետությունը: Ելնելով էներգաարդյունավետության հիմնական պահանջների վերաբերյալ համաձայնեցված դիրքորոշումից, կառաջարկվեն ազգային կամ միջազգային ստանդարտներ և մեթոդներ, կամ կկազմակերպվի դրանց մշակումը՝ պահանջների հետ համապատասխանություն ապահովելու նպատակով: Ֆինանսավորումը կօգտագործվի հարթակի գործունեությունը կազմակերպելու, մասնագետների ծառայությունների դիմաց վճարելու, ԵՏՄ

երկրներում տեխնիկական կարգավորման և էներգաարդյունավետության համար պատասխանատու պետական մարմինների ներկայացուցիչների հետ թեմատիկ հանդիպումներ և խորհրդակցություններ անցկացնելու համար:

Ծրագիրը կազմակերպում է ԵՏՄ երկրներում էներգաարդյունավետության ստանդարտների մշակման տարեկան նիստերի աշխատանքները: Նիստին մասնակցելու են հարթակում ներգրավված մասնագետները, պետական պաշտոնյաները և շուկայի մասնակիցները: Նիստերի անցկացման վայր կարող է հանդիսանալ ENES միջազգային համաժողովը կամ միջազգային մեկ այլ հարթակ՝ ըստ կողմերի համաձայնության: Բացի այդ, կանցկացվեն աշխատանքային սեմինարներ տեղական իշխանությունների / կարգավորող մարմինների և շուկայի ներկայացուցիչների մասնակցությամբ՝ էներգախնայողության կարգավորման նախաձեռնությունների իրականացման գործընթացի թափանցիկության և հասկացության ապահովման համար: Դա կնպաստի հարթակի գործունեության մեջ մասնագիտական հանրության և սպառողների ավելի լայն և իրազեկված ներգրավվածությանը:

Գործողություն 1.2. Լուսավորության, կենցաղային տեխնիկայի և շենքերի ինժեներական սարքավորումների ոլորտում ԷԱՆՍ և ԲԷԱՍ-երի զարգացում (տեխնիկական կանոնակարգերի առաջարկներ, միջպետական ստանդարտների նախագծերի պատրաստում, ԵՏՄ պետություններում հանրային գնումների կարգավորմանն ուղղված առաջարկությունների մշակում):

Ծրագրի թիմի փորձագետները կաշխատեն ծրագրում ներգրավված երկրների իշխանությունների և ծրագրի գործընկերների հետ՝ մասնակից երկրների էներգաարդյունավետության առաջնահերթ ռազմավարությունների մշակմանն ուղղությամբ: Ծրագրի թիմը կնախապատրաստի ելակետային տեղեկատվությունը (վերլուծությունը)՝ էներգախնայողության կարգավորման վերաբերյալ տվյալների հիման վրա և կներկայացնի առաջնահերթ կարևորության ԷԱՆՍ և ԲԷԱՍ-երի ներդրման առաջարկներ: Առաջարկվող երկրի ռազմավարությունների համաձայնեցումից և քննարկումից հետո նախատեսվում է մշակել կամ հստակեցնել ԷԱՆՍ և ԲԷԱՍ-ները ազգային մակարդակով առավելապես կարևոր համապատասխան կանոնակարգող ոլորտներում (էներգախնայողության առավել բարձր ցուցանիշ ապահովող սարքերի համար), ինչպես նաև երկրների միջև փոխհամաձայնեցված պահանջով՝ նաև տարածաշրջանային մակարդակով: Երկրների կողմից մշակված և համաձայնեցված պահանջները կօգտագործվեն տեխնիկական կանոնակարգերի թարմացման համար: ԷԱՆՍ-ը թույլ կտա վերացնել շուկայից ամենաանարդյունավետ արտադրանքը, ապահովելով, որ բոլոր ապրանքները բավարարեն կամ գերազանցեն կոնկրետ էներգաարդյունավետության արժեքները: ԷԱՆՍ - ի համաձայն որոշվելու է, թե որ ապրանքները կարող են արտադրվել / ներմուծվել, և որոնք պետք է հեռացվեն շուկայից: ԷԱՆՍ - ը գործընկեր երկրներում էներգաարդյունավետության ծրագրի հաջողության հիմքն է: ԲԷԱՍ-ը կօգտագործվի պետական գնումների կամ «Կանաչ գնումների» կարգավորմանն ուղղությամբ, ինչպես նաև արտադրողներին կխթանի բարձրացնել իրենց արտադրանքի էներգաարդյունավետությունը:

ԲԷԱՍ և ԷԱՆՍ համապատասխանության ստուգումը կիրականացվի փորձարկման լաբորատորիաների կողմից: Փորձարկման լաբորատորիաների կարողությունները կբարելավվեն ծրագրի շրջանակներում տրամադրված մեթոդաբանական և տեխնիկական աջակցության միջոցով:

Ապրանքային խմբերի ցանկը, որոնց համար մշակվելու են էներգաարդյունավետության ստանդարտներ՝

- Կենցաղային օգտագործման լամպեր և լուսավորման սարքեր (տարբեր տեսակների),
- Հասարակական նշանակության շենքերի և արդյունաբերական տարածքների ընդհանուր լուսավորության և արտաքին լուսավորություն լամպեր (տարբեր տեսակների),
- Տարածքի ընդհանուր լուսավորության համար նախատեսված կանթեղներ (տարբեր տեսակների),
- Արտաքին լուսավորման համար նախատեսված կանթեղներ (տարբեր տեսակների),
- Սառնարաններ և սառցարաններ,

- Սպասք լվացող մեքենաներ,
- Լվացքի մեքենաներ,
- Ասինխրոն էլեկտրաշարժիչներ,
- Հեռուստացույցներ,
- Էլեկտրասնուցման արտաքին աղբյուրներ,
- Էլեկտրական օդափոխիչներ,
- Համակարգիչներ և սերվերներ,
- Ջրի պոմպեր,
- Օդորակիչներ և սենյակային օդափոխիչներ:

Նախ և առաջ կպատրաստվեն և կներդաշնակեցվեն էներգախնայող լուսավորության կիրառման չափանիշները և պահանջները, քանի որ այս հատվածն ունի էներգաարդյունավետության ամենաբարձր ներուժը:

Կախված ապրանքային խմբի առանձնահատկություններից և նշանակությունից, երկրները կարող են առաջարկել էներգաարդյունավետության ստանդարտների մշակում սարքավորումների լրացուցիչ տեսակների համար:

Գործողություն 1.3. Բարձր էներգաարդյունավետության սարքավորումների համար պահանջվող խթանման մեխանիզմների կատարելագործում (էներգախնայողության սարքավորումների թողարկման ծրագրերի և ESCo սխեմաների սուբսիդավորման վերաբերյալ առաջարկությունների մշակում, հաշվի առնելով գործնական փորձը ԵՏՄ երկրներում):

Նախատեսվում է մեթոդաբանական բազայի բարելավում էներգախնայող սարքավորումների ներդրման համար՝ հաշվի առնելով քաղաճ դասերը և գործընկեր երկրներում ձեռք բերված փորձը: Կներկայացվեն ծրագրի իրականացման մոդելները ESCo սխեմաների կիրառմամբ, ներառյալ ՌԴ-ում մշակված էներգիայի սպառման որոշման մեթոդիկայի կիրառման վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստումը: Տիպային տեխնիկատնտեսական ուսումնասիրություն կկատարվի բնակչության համար էներգախնայող լամպերի սուբսիդավորման ծրագրի իրականացման կամ բարձր էներգաարդյունավետության դասի կենցաղային տեխնիկայի վաճառքի սուբսիդավորման սխեմայի ուղղությամբ: Կմշակվեն առաջարկություններ բյուջետային ոլորտում էներգախնայող լամպերի կամ հարմարանքների, ինչպես նաև բնակարանային և կոմունալ ծառայությունների սուբսիդավորման կամ էներգաարդյունավետության բարձր դասի ինժեներական սարքավորումների կամ կենցաղային տեխնիկայի սուբսիդավորված վաճառքի ուղղությամբ: Այս մեխանիզմները կառաջարկվեն քաղաքային իշխանություններին՝ նպատակ ունենալով մասնավոր ներդրումներ ներգրավել քաղաքային ենթակառուցվածքների արդիականացման, հասարակական շենքերի կամ էներգաարդյունավետ շենքերի կառուցման համար: Ծրագիրը խորհրդատվական աջակցություն կցուցաբերի շահագրգիռ շուկայի մասնակիցներին, այդ թվում՝ տեխնիկատնտեսական ուսումնասիրության կամ տեխնիկական բնութագրերի մշակման միջոցով:

Գործողություն 1.4. Լուսավորման, կենցաղային տեխնիկայի և շենքերի ինժեներական սարքավորումների էներգաարդյունավետության ստանդարտների վերաբերյալ տեղեկատվության փոխանակում (համաժողովների և թեմատիկ հրատարակությունների միջոցով):

ԵՏՄ երկրների էներգաարդյունավետության միջազգային միջոցառումների շրջանակներում նախատեսվում է կազմակերպել երեք համաժողովներ կամ նիստեր՝ էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգի մշակման ռազմավարությունը քննարկելու, ԲԷԱՍ-ների ներդրման գծով փորձի փոխանակման և շուկայում առկա ապրանքների էներգաարդյունավետության ցուցանիշների վերահսկողության ստանդարտների և մեթոդների մշակման նախագծերի փոխանակման նպատակով: Այս նիստերի ընթացքում կքննարկվեն տարբեր երկրներում արտադրանքի փորձարկման արդյունքները և կմշակվեն տեղեկատվության տարածման վերաբերյալ առաջարկություններ: Ծրագիրը կաջակցի թեմատիկ նիստերի

նախապատրաստմանը, նյութերի մշակմանը և տպագրությանը և կվճարի գործընկեր երկրներին հրավիրված մասնագետների գործուղման ծախսերը:

Նախատեսվում է օգտագործել ENES միջազգային համաժողովը՝ որպես ծրագրի հիմնական թեմատիկ համաժողովի հիմնական հարթակ, հաշվի առնելով, որ այն պատմականորեն օգտագործվում է ՄԱԶԾ-ի կողմից էներգաարդյունավետության ոլորտում ձեռք բերված արդյունքները քննարկելու համար: Հնարավոր կլինի նաև օգտագործել այլ միջազգային հարթակներ՝ կողմերի համաձայնությամբ:

Ծրագրի թիմը կպատրաստի՝ ԵՏՄ երկրներում էներգաարդյունավետության պահանջների մշակման վերաբերյալ շնորհանդեսներ կամ հրապարակումներ, որոնք կօգտագործվեն որպես տեղեկատվական նյութեր: Շնորհանդեսները և հրապարակումները նվիրված կլինեն ոչ միայն ԷԱՆՍ/ԲԷԱՍ-երի ներդրմանը, այլև էներգախնայող արտադրանքի արտադրության զարգացման և ներմուծման ուղղությամբ երկրների ծրագրերին: Դրանք կներկայացնեն նաև էներգաարդյունավետության բնագավառում նորարարական տեխնոլոգիաների ներդրման փորձը, էներգախնայողության բնագավառում լավագույն նախագծերի մրցույթների արդյունքները, բնակչության շրջանում տեղեկատվական քարոզչության արդյունքները և էներգախնայող տեխնոլոգիաների խթանմանն ուղղված այլ արդյունքներ: .

Ծրագիրը տեղեկատվական աջակցություն կցուցաբերի ԵՏՄ երկրներում էներգախնայող տեխնոլոգիաների ներդրման նախագծերի շրջանակներում ընթացող միջազգային և ազգային մրցույթների (մրցանակների) գործընթացներին: Տարածված փորձը և լավագույն օրինակները կնպաստեն իշխանությունների և սպառողների շրջանում խթանել էներգաարդյունավետ լուծումների ներդրումը:

Արդյունք 2. Փորձարկման լաբորատորիաների համակարգի ստեղծումը և ցածր արդյունավետության սարքավորումներից շուկան պաշտպանելու միջոցառումների իրականացումը:

Գործողություն 2.1 Աջակցություն ԷԱՆՍ/ԲԷԱՍ- ում նշված չափորոշիչների փորձաքննական և չափման ստանդարտների և մեթոդների մշակման ուղղությամբ:

Նախատեսվում է կազմակերպել էլեկտրաէներգի սպառող պարանքների և համակարգերի էներգաարդյունավետության պահանջների վերահսկման մեթոդաբանական բազայի մշակումը և արդիականացումը ԵՏՄ երկրներում: Կվերլուծվի փորձարկման մեթոդներ պարունակող առկա ստանդարտների բլոկը՝ լուսավորության սարքավորումների, կենցաղային էներգիա սպառող տեխնիկայի, շինարարական տեխնիկայի և էներգախնայող համակարգերի (լուսավորություն, օդափոխություն և այլն) էներգաարդյունավետության պահանջների հետ համապատասխանությունը հավաստելու նպատակով:

Ներկայումս անհրաժեշտություն կա թարմացնելու առկա ստանդարտների և մեթոդների մի մասը: Մաքսային միության «էներգասպառող սարքերի էներգաարդյունավետության պահանջների վերաբերյալ» տեխնիկական կանոնակարգերի նախագծերում ներառված սարքավորումների կատեգորիաների փորձարկման մեթոդների միջազգային ստանդարտների (34 ստանդարտ) լայնածավալ փաթեթը թարգմանվում և գրանցվում է «Ստանդարտ տեղեկություն» համակարգում: Ներկայումս անհրաժեշտ է այդ փաստաթղթերին շնորհել միջպետական չափանիշների կարգավիճակ: Հետևաբար, հիմնական աշխատանքը կենտրոնանալու է առկա ստանդարտները թարմացնելու կամ բացակայող տեխնոլոգիաների մշակման կազմակերպման նպատակով ծրագրի փորձագետների և տեխնիկական հանձնաժողովների միջև փոխգործակցության ուղղությամբ: Սա լայնածավալ աշխատանք է, որը կիրականացվի ոչ միայն ծրագրում ընդգրկված երկրների Ծրագրի գործընկերների, այլև Ռուսաստանի Դաշնության գործընկերների հետ համագործակցությամբ: Ծրագիրը առավելապես կանդրադառնա աշխատանքային ստանդարտների/ մեթոդաբանությունների մեկ երկրից մյուսին փոխանցմանը, դրանց արդիականացմանը և ներդաշնակեցմանը:

Ծրագիրը կաջակցի փաստաթղթերի տեխնիկական վերանայմանը՝ նպատակ ունենալով բացառել տեղական մակարդակում փաստաթղթերի սխալ թարգմանությունն ու մեկնաբանումը և կանխել ԵՏՄ շուկայի մասնակիցների միջև հնարավոր վիճահարույց իրավիճակների առաջացումը:

Ծրագրի հիմնական նպատակն է գործարկել նոր (բացակայող) ստանդարտների և մեթոդների մշակմանն ուղղորդվելիք բոլոր հնարավոր տեղական ֆինանսավորման աղբյուրները, այդ թվում, Ռուսաստանի Դաշնությունից ֆինանսավորման աղբյուրները:

Գործողություն 2.2. Գործընկեր երկրներում փորձաքննական օբյեկտների կարողությունների գնահատում և լաբորատորիաների, արտադրողների և սպառողների փոխհարաբերությունների լոգիստիկ սխեմայի մշակում:

Նախատեսվում է գնահատել գործընկեր երկրներում լաբորատոր ռեսուրսների առկայությունը, որոշել փորձաքննության ենթակա ապրանքների խմբերը, կամ վերահսկման ընթացակարգերի իրականացման համար համակարգերը և մշակել շահագրգիռ մասնակիցների, կարգավորիչների և լաբորատորիաների փոխգործակցության սխեման: Այս բաղադրիչի շրջանակում շուկայի մասնակիցների համար կմշակվեն փորձարկումների կազմակերպման վերաբերյալ առաջարկություններ (ներառյալ փորձարկման ծավալների գնահատումը և դրանց արժեքի որոշումը): Կմշակվեն նաև լաբորատորիաների տեղադիրքային քարտեզը և Միության երկրներում լաբորատորիաների (շարժական լաբորատորիաների) միջև փորձարկման նմուշների կամ լաբորատոր սարքավորումների փոխադրման օպտիմալ սխեման: Ընդհանուր առմամբ սխեման կներառի Ղազախստանում, Բելառուսում, Ռուսաստանի Դաշնությունում, Հայաստանում և Ղրղզստանում տեղակայված լաբորատորիաները: Սա զգալիորեն կնվազեցնի երկրների ծախսերը լաբորատոր հզորությունների ստեղծման ուղղությամբ, կնպաստի լաբորատորիաների արդյունավետության բարձրացմանը և էներգախնայողության պահանջների իրականացման գործընթացի արագացմանը:

Ծրագրի թիմը կազմակերպում է շահագրգիռ կողմերի ներկայացուցիչների համար մի քանի ուսումնական շրջայց ԵՏՄ երկրների լավագույն փորձարկման լաբորատորիաներ, որտեղ նրանք կուսումնասիրեն ապրանքի փորձարկման առաջատար փորձը, կիրազեկեն շուկայի մասնակիցներին և կծանոթանան լաբորատորիաների համագործակցությանը քաղաքային / պետական մարմինների հետ՝ էներգաարդյունավետ ապրանքների որակի վերահսկողության կամ բյուջետային ոլորտում դրա իրականացման որակի վերահսկողության ուղղությամբ (ծանոթացում շուկայի դիտազննման միջոցառումների կազմակերպման փորձին):

Գործողություն 2.3. Կենցաղային տեխնիկայի և սարքավորումների որակի և էներգաարդյունավետության ցուցանիշների ընտրանքային վերահսկման պիլոտային ծրագրերի իրականացում:

Այս բաղադրիչի շրջանակներում կկազմակերպվի գործընկեր երկրների շուկաներ մուտք գործող նոր սարքավորումների նմուշների և շուկայում հասանելի գանգվածային արտադրանքի նմուշների փորձարկում՝ հայտարարված որակի և էներգաարդյունավետության բնութագրերի իսկությունը հավաստելու նպատակով: Պատահականորեն ընտրված նմուշները կենթարկվեն լաբորատոր փորձարկման և արդյունքները կներկայացվեն մասնագիտական հրապարակումների և լրատվամիջոցների միջոցով: Փորձարկումները կիրականացվեն անկախ ազգային լաբորատորիաներում (կամ ԵՏՄ երկրների լաբորատորիաներում), ըստ ընդհանուր միջպետական կամ միջազգային մեթոդների և ստանդարտների: Պիլոտային փորձարկման ծրագրի արդյունքները կօգտագործվեն էներգախնայող արտադրանքի որակի և շուկայի պաշտպանության միջոցառումների ստուգման համար կանոնակարգային դաշտի վերաբերյալ առաջարկությունների մշակման համար:

Ծրագրի իրականացման ընթացքում կիրատարակվի փորձարկման լաբորատորիաների հնարավորությունների վերաբերյալ հսկիչ փորձարկման արդյունքների վերաբերյալ և սպառողների տեղեկացմանն ուղղված տեղեկագիր, որը կտարածվի շահագրգիռ

գործընկերների շրջանում: Նորությունների թողարկումում ներկայացված նյութերը կներառեն էներգախնայողության համապատասխանության մշտադիտարկման ոլորտում լավագույն միջազգային փորձի մասին տեղեկատվությունը, ինչպես նաև նորություններ ԵՏՄ երկրներում որակի վերահսկողության և էներգաարդյունավետության ոլորտում նախատեսված ծրագրերի և գործողությունների վերաբերյալ:

Գործողություն 2.4. Գործընկեր երկրներում փորձարկման լաբորատորիաների արդիականացում, ներառյալ փորձարկման սարքավորումների ձեռքբերում և անձնակազմի վերապատրաստում:

Նախատեսվում է որոշել անհրաժեշտ հավելյալ ծավալները ԵՏՄ երկրներում՝ լաբորատորիաների հասանելի հզորությունների և պահանջվող փորձարկումների քանակային տվյալների հիման վրա: Հատուկ լաբորատորիաների համար (ստեղծված կամ արդիականացված), կներդրվեն առաջարկություններ նոր սարքավորումների կազմի, արտադրողականության և գործառնական ծախսերի վերաբերյալ: Նախատեսվում է նաև անդրադառնալ հավատարմագրման խնդիրներին, և կներկայացվեն տարբերակներ միջլաբորատոր համեմատությունների նպատակով, այդ թվում, միջազգային հավատարմագրման ուսումնասիրություններ և փորձարկման արդյունքների ճանաչում:

Ծրագիրը փորձագիտական աջակցություն կցուցաբերի ծրագրի գործընկերներին՝ լաբորատոր սարքավորումների ձեռքբերման փուլում և կօգնի կազմակերպել լաբորատորիայի կադրերի պատրաստումը:

Ղրղզստանում և Հայաստանում նախատեսվում է Ծրագրի հաշվին ձեռք բերել լուսավորման ոլորտի լաբորատորիաների համար սարքավորումներ (սպեկտրոմետրեր, գոնիոֆոտոմետրեր, լյուքսմետրեր և օժանդակ սարքավորումներ)՝ և վերապատրաստել համապատասխան մասնագետների: Աշխատակազմի ուսուցումը կարող է իրականացվել տեղական կամ Ռուսաստանի Դաշնության կամ այլ գործընկեր երկրների գործող լաբորատորիաների հիման վրա:

Բացի այդ, ծրագրի երկրի բաղադրիչների շրջանակում հնարավոր է ձեռք բերել սարքավորումներ փոքր տիպի կենցաղային տեխնիկայի որոշ տեսակների փորձաքննության համար, ինչպիսիք են հեռուստացույցները, տնային օդափոխիչները, էլեկտրական տաքացուցիչները և այլն:

Ծրագրի ավարտին կհիմնվեն կամ կարդիականացվեն առնվազն 2 լաբորատորիաներ, և առնվազն 20 մասնագետ կանցնի վերապատրաստման դասընթաց կամ ծանոթացման պրակտիկա:

Արդյունք 3. Սպառողների իրազեկության բարձրացում էներգախնայող տեխնոլոգիաների տարբերակների և օգուտների վերաբերյալ, ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման գնահատում:

Գործողություն 3.1. Էներգաարդյունավետության և էներգաարդյունավետ տեխնոլոգիաների օգտագործման վերաբերյալ ԵՏՄ-ի երկրներում սպառողների իրազեկության բարձրացման համար վեբ-պորտալի մշակում և սպասարկում:

Նախատեսվում է մշակել և վարել տարածաշրջանային վեբ-պորտալ, էներգախնայողության խթանման համալիր միջոցառումների վերաբերյալ տեղեկատվության հավաքման համար: Պորտալը կձառայի սպառողներին էներգախնայող տեխնոլոգիաների տարբերակների և օգուտների մասին տեղեկացման և էներգախնայողությանն ուղղված գործողությունների խթանման նպատակով:

Պորտալը նաև տեղեկատվություն կտրամադրի ծրագրի իրականացման գործընթացի վերաբերյալ և կստեղծի լրացուցիչ հնարավորություններ թիրախային լսարանների միջև ցանցի ստեղծման և տեղեկատվության փոխանակման համար: Ծրագրի ընթացքում սպառողների

տարբեր խմբեր կատանան էներգախնայողության մասին ժամանակակից տեղեկատվության հասանելիություն, փորձի փոխանակում և կոնկրետ ձեռքբերումներ: Պորտալը կարող է լինել կոնկրետ հասարակական նախաձեռնությունների իրականացման հարթակ՝ առցանց քվեարկության ձևով և նպատակ ունենալով ապահովել էներգախնայող և էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիաների առաջխաղացումը:

Գործողություն 3.2. ԵՏՄ երկրներում էներգախնայողության համապարաժման միջոցառումների ճանապարհային քարտեզի մշակում:

Ծրագրի նպատակն է բարձրացնել հանրության իրազեկվածությունը էներգախնայողության հարցերի և էներգախնայողության ռացիոնալ օգտագործման ուղղակի միջոցների մասին, ինչպես նաև ամրապնդել պետական կառավարման մարմինների կարողությունները կրթական և վերապատրաստման միջոցառումներ իրականացնելու համար:

Ծրագիրը նախատեսում է պլանավորված միջոցառումների և դրանց դասակարգման ամենամյա վերանայում ըստ զանգվածային և թիրախային ազդեցության: Նախագիծը, առաջին հերթին, կվերլուծի բոլոր ԵՏՄ երկրներում էներգաարդյունավետության բևեռացման նշանակալի միջոցառումները, կպատրաստի ճանապարհային քարտեզ և կառաջարկի այս ոլորտում երկրների գործունեության ներդաշնակեցման ուղիներ: Դա կնվազեցնի էներգախնայողության քաղաքականության խթանման ուղղությամբ ծրագրի գործընկերների ծախսերը, կօգնի ներգրավել ավելի շատ մարդկանց և միջազգային կարգավիճակ կապահովի բազմաթիվ հաջողված միջոցառումների համար: Մշակվող ուղենշային գործողությունները հաշվի կառնեն թիրախային խմբերի քաղաքացիների և բնակավայրերի տեղեկատվական կարիքները:

Գործողություն 3.3. Սոցիոլոգիական հետազոտությունների և սպառողական խմբերի վերլուծության միջոցով էներգաարդյունավետության սրանդարտների ներդրման ազդեցության գնահատում: ԶԳ արտանետումների նվազեցման ազդեցության գնահատում:

Հետազոտություններ կանցկացվեն էներգախնայող տեխնոլոգիաների օգտագործումը սահմանափակող գործոնները բացահայտելու համար: Այս ուսումնասիրությունների արդյունքները կօգտագործվեն սպառողների տարբեր խմբերի համար տարբերակված տեղեկատվության մշակման և տարածման վերաբերյալ առաջարկությունների մշակման և էներգաարդյունավետության ստանդարտների ներդրման համար: Օրինակ, կգնահատվի ԷԱՆՍ - ի ազդեցությունը ցածր արդյունավետության լամպերի (շիկացման լամպերի կամ կոմպակտ լյումինեսցենտային լամպերի) օգտագործման վրա: Գնահատման արդյունքների համաձայն, կարող են առաջարկվել լրացուցիչ պահանջներ, և կգնահատվի էներգիայի սպառման և ԶԳ արտանետումների կրճատումը:

Էներգախնայողության տեխնոլոգիաների՝ տարբեր սպառողական խմբերի կողմից օգտագործման մակարդակը կմշտադիտարկվի էներգաարդյունավետության ստանդարտների ներդրումից առաջ և հետո: Մշտադիտարկման տվյալները կօգտագործվեն էներգախնայողության գնահատման և ջերմոցային գազերի արտանետումների համապատասխան նվազեցման համար:

Գործողություն 3.4. Էներգախնայող սարքավորումների ներդրման ծրագրերի իրականացման մշտադիտարկում (լուսավորություն և շենքերի ինժեներական սարքավորումներ) և ԵՏՄ երկրներում դրանց վերարտադրության առաջարկությունների մշակում:

Նախատեսվում է իրականացնել գործընկեր երկրներում էներգախնայող լուսավորության և/կամ ավտոմատացման տեխնոլոգիաների կառուցման իրականացվող նախագծերի վերաբերյալ տվյալների հավաքագրում և վերլուծում:

Կպատրաստվի էներգաարդյունավետության ծրագրերի կատալոգ, և երկրների խնդրանքով կիրավիրվեն փորձագետներ, որոնք կմշակեն և կվերարտադրեն առավել խոստումնալից նախագծային լուծումները: Նախ և առաջ, Ծրագիրը ուշադրություն կդարձնի լուսավորության

և/կամ շենքերի ավտոմատացման ոլորտում իրականացվող ծրագրերի կատարողի պատրաստմանը՝ որպես էներգախնայողության առավել մեծ ներուժ ունեցող ոլորտներ:

Ծրագիրը նաև կմշակի էներգաարդյունավետության և դրանց մշտադիտարկման մեթոդաբանական նյութերի ցուցանիշները:

Առավել հետաքրքիր ծրագրերի հետ ծանոթանալու համար կկազմակերպվի ուսումնասիրությունների/ուսումնական շրջագայությունների շարք, ինչպես նաև քննարկումներ կլոր սեղանների/սեմինարների ձևաչափով:

Ծրագիրը կօժանդակի երկրներին՝ մասնակցելու միջազգային մակարդակով էներգաարդյունավետության բարելավման միջազգային նախաձեռնություններին (Մաքուր էներգիայի նախարարություն կամ այլոք): Դա կնպաստի ուղենիշների հիմնմանը՝ ելնելով էներգակիրների հիմնական ցուցանիշներից, որոնք կապահովեն կլիմայի և կայուն զարգացման գլոբալ նպատակների իրագործումը:

Ծրագրի տարածաշրջանային և ազգային բաղադրիչների փոխլրացելիություն

Տարածաշրջանային ծրագրի և ազգային ծրագրերի փոխգործակցության մեխանիզմները հիմնված կլինեն համակարգող կոմիտեի գործունեության և տարածաշրջանային փորձագիտական հարթակի վրա, որը կմիավորի ԵՏՄ-ի երկրների կառավարությունների և մասնագիտական հասարակության ներկայացուցիչներին: Հարթակի մասնակիցների անդամների և Կոմիտեի գործունեությունը հնարավորություն կտա մշակել տարեկան աշխատանքային պլաններ, հաշվի առնելով ծրագրի նպատակները և ազգային ծրագրերը: Տարածաշրջանային ծրագրի շրջանակներում գործողությունները կավելացվեն ազգային ծրագրերի գործունեությանը: Օրինակ, տարածաշրջանային ծրագիրը կօժանդակի ԷԱՆՍ/ԲԷԱՍ-ները փոխանցել այն երկրներից, որտեղ դրանք մշակվել և ներդրվել են, դեպի այն երկրներ, որտեղ այդպիսի ստանդարտներ գոյություն չունեն: Տարածաշրջանային հարթակի փորձագետները խորհրդատվական օժանդակություն կցուցաբերեն երկրի կառավարություններին էներգաարդյունավետության կարգավորման առաջնահերթ ուղղությունների վերաբերյալ և կնվազեցնեն ծախսերը այլ երկրների, այդ թվում՝ Ռուսաստանի Դաշնության փորձի օգտագործման շնորհիվ: Ծրագրի տարածաշրջանային բաղադրիչը կօժանդակի պետությունների կառավարություններին՝ նվազագույնի հասցնելու փորձարկման լաբորատորիաների ստեղծման ծախսերը, մասնավորապես՝ ազգային ծրագրերը կստանան անհրաժեշտ փորձաքննություն և տեղեկատվություն, ԵՏՄ-ի երկրներում փորձարկման լաբորատորիաների հասանելիության և դրանց հնարավոր կարողությունների մասին: Սա թույլ կտա ծախսարդյունավետ լուծում գտնել և խուսափել այնպիսի լաբորատորիաների ստեղծումից, որոնք պահանջարկ չեն ունենալու գործընկեր երկրներում որոշակի սարքավորումների համար շուկայում սահմանված սահմանափակումների պատճառով: Ծրագրի տարածաշրջանային բաղադրիչը կմշտադիտարկի նաև ազգային ծրագրերի գործունեությունը և հնարավորություն կտա ինտենսիվացնել երկրների միջև էներգախնայող տեխնոլոգիաների ներդրման փորձի փոխանակումը:

Տարածաշրջանային միջամտությունների փոխլրացման ազգային ծրագրերը, ինչպես նաև այդ արդյունքների իրագործման համար հասանելի ռեսուրսները արտացոլվում են ծրագրային բյուջեում, ներառյալ համաֆինանսավորումը (տես աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Ակնկալվող արդյունքներին հասնելու համար պահանջվող ռեսուրսներ

Ակնկալվող միջանկյալ արդյունքներ	Աշխարհագրական բաղադրիչ	Հավատարմ ազգային հիմնադրամ, դրամաշնորհ	Զուգահեռ ֆինանսավորում (համաֆինանսավորում)	Գործունեության նկարագիրը
---------------------------------	------------------------	--	--	--------------------------

		ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	
<p>ԱՐԴՅՈՒՆՔ 1՝ Լուսավորության, կենցաղային տեխնիկայի և շենքերի ինժեներական սարքավորումների էներգաարդյունավետության վերաբերյալ ժամանակակից չափորոշիչների մշակում և ներդրում:</p>	Տարածաշրջանային	265 000,00	-	Առաջնահերթ ապրանքատեսակների և համակարգերի համար ԷԱՆՍ/ԲԷԱՍի մշակման միասնական պլանի պատրաստում, դրա համակարգում ԵՏՄ երկրների հետ և շուկայի մասնակիցների իրազեկում, էներգետիկ արդյունավետության խթանման համար ԷԱՆՍ /ԲԷԱՍ-ների մշակման և ներդաշնակեցման և մեթոդաբանական հիմքերի մշակման ուղղությամբ տարածաշրջանային հարթակի փորձագետների մասնակցություն, ԵՏՄ երկրներում կանոնակարգող դաշտի վերաբերյալ համաժողովների և սեմինարների կազմակերպում և աջակցություն, նախագծի արդյունքների հրապարակում:
	Հայաստան	85 000,00	800 000,00	Էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված ԷԱՆՍ /ԲԷԱՍ-ի և մեթոդաբանական հիմքերի մշակում, համագործակցություն ազգային շահագրգիռ կողմերի հետ, ազգային փորձագետների և շահագրգիռ կողմերի մասնակցություն տարածաշրջանային գիտաժողովներում և սեմինարներում;
	Ղրղզստան	85 000,00	30 000,00	Էներգաարդյունավետության կարգավորման կանոնակարգի մշակման համար համաֆինանսավորման ներգրավում:
	Բելառուս	-	150 000,00	
	Ղազախստան	-	600 000,00	
<p>ԱՐԴՅՈՒՆՔ 2՝ Փորձարկման լաբորատորիաների համակարգի ստեղծում և ցածր արդյունավետության սարքավորումներից շուկան պաշտպանելու միջոցառումների իրականացում</p>	Տարածաշրջանային	230 000,00		Վերլուծական նյութերի պատրաստում՝ առկա ստանդարտների և էներգախնայող սարքավորումների փորձարկման մեթոդների վերաբերյալ, ներառյալ ստանդարտների և փորձարկման մեթոդների մշակման ազգային ծրագրերի գնահատում: Ստանդարտների համապարփակ պլանի մշակում և փորձարկման մեթոդների մշակում: ԵՏՄ երկրներում փորձարկման օբյեկտների վերլուծություն, ԵՏՄ երկրներում էներգախնայող սարքավորումների և համակարգերի առաջնահերթ խմբերի փորձարկման պահանջարկի հաշվարկ: Փորձարկման լաբորատորիաների ստեղծման / արդիականացման ուղղությամբ ջանքերի օպտիմալացման վերաբերյալ ազգային ծրագրերի համար լաբորատորիաների համագործակցության առաջարկությունների մշակում:

				Հավաստիացման նպատակով փորձարկման չափորոշիչների մշակում և արտադրանքի և համակարգերի առաջնային խմբերի համար պիլոտային փորձարկման ծրագրի իրականացում: Ազգային շահառուների իրազեկում գործունեության արդյունքների մասին:
	Հայաստան	160 000,00	400 000,00	Ստանդարտների և փորձարկման մեթոդների մշակում կամ ԵՏՄ երկրներից դրանց փոխանցում (ադապտացում՝ թարգմանություն և պաշտոնականացում): Փորձարկման լաբորատորիաների ստեղծում կամ արդիականացում և անձնակազմի վերապատրաստում:
	Ղրղզստան	160 000,00		
	Բելառուս		100 000,00	
	Ղազախստան		1 400 000,00	
ԱՐԴՅՈՒՆՔ 3՝ Սպառողների իրազեկության բարձրացում էներգախնայող տեխնոլոգիաների տարբերակների և օգուտների վերաբերյալ, ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման գնահատում:	Տարածաշրջանային	195 000,00		Բնակչության շրջանում էներգաարդյունավետության համատարածման միջոցառումների կազմակերպման ուղղությամբ ազգային շահագրգիռ կողմերի իրազեկվածության բարձրացման և աջակցության ազգային ծրագրերի վերլուծություն: էներգախնայող տեխնոլոգիաների ներդրման լավագույն փորձի մշտադիտարկում: ԶԳ արտանետումների նվազեցման գնահատում: էներգաարդյունավետ տեխնոլոգիաների ներդրման նախագծերի իրականացում, մասնավոր հատվածի և բնակչության շրջանում էներգաարդյունավետության համատարածման վերաբերյալ իրազեկմանն ուղղված գործունեություն:
	Հայաստան	35 000,00	2 000 000,00	
	Ղրղզստան	35 000,00	30 000,00	
	Բելառուս		300 000,00	
	Ղազախստան		1 200 000,00	

Գործընկերություններ և կապեր ՄԱԶԾ-ի ընթացիկ նախաձեռնությունների հետ

Տարածաշրջանային ծրագրի բարեհաջող իրականացումը կախված կլինի տարբեր գործակալությունների միջև բազմաթիվ մակարդակներում արդյունավետ գործընկերության ձևավորումից: Գործընկերային հարաբերությունների հիմնման ուղղությամբ աշխատանքներ կտարվեն գործընկեր երկրներում ազգային գործակալությունների, մասնավոր հատվածի և մասնագիտական համայնքի հետ: Ծրագիրը կիրականացնի հետևյալ գործողությունները ծրագրի աշխատանքի և տարածաշրջանային մակարդակով իրականացվող ընթացիկ գործողությունների սիներգիայի ապահովման, ինչպես նաև տարածաշրջանում առկա փորձագիտական գիտելիքներից օգուտ քաղելու ուղղությամբ, ամրապնդելով կապը ԵՏՄ երկրներում էներգետիկ ոլորտին առնչվող հիմնական նախագծերի և նախաձեռնությունների հետ:

Ռուսաստանի Դաշնության հետ համագործակցությունը շահեկան կլինի, հաշվի առնելով 2010-2016թթ. ՄԱԶԾ-ԳԷՀ-ի ծրագրի արդյունքում արձանագրված զգալի առաջընթացը ծրագրի առարկայական ոլորտում, մասնավորապես՝ i) ԷԱՆՍ-ի ազգային մակարդակով մշակում ii) փորձաքննական լաբորատորիաների ցանց, iii) էներգաարդյունավետության քարոզման միջոցառումների միջոցով ձեռք բերված փորձ, iv) էներգաարդյունավետ լուսավորության ներդրմանն ուղղված ցուցադրական ծրագրեր, v) մասնավոր ներդրումների ներգրավման

համար կիրառվող ֆինանսական մեխանիզմներ, vi) էներգաարդյունավետության վերաբերյալ նորմատիվ փաստաթղթեր լուսավորող սարքավորումներին, կենցաղային տեխնիկային և շենքերի ինժեներական սարքավորումներին առնչվող հատուկ դրոյթներով, այդ տեսակի սարքավորումների փորձաքննական մեթոդների չափորոշիչներով, vii) ինչպես նաև ՄԱԶԾ-ի և ՌԴ էներգետիկայի նախարարության, ՌԴ-ի Արդյունաբերության և առևտրի նախարարության, Ռոսստանդարտի, ԵՏՄ և մասնավոր հատվածի միջև կառուցված համագործակցության և վստահության ամրապնդում:

Մասնավորապես, Ծրագիրը համագործակցելու է Ռուսաստանի էներգետիկայի նախարարության հետ էներգիայի արդյունավետության պահանջների կատարելագործման և ներդաշնակեցման, էներգախնայող տեխնոլոգիաների (ESCO և/կամ այլ) ներդրման մեթոդաբանական հիմքերի ստեղծման, էներգետիկ արդյունավետության և էներգախնայողության տեխնոլոգիաների օգտագործման վերաբերյալ ԵՏՄ երկրներում սպառողների իրազեկման համար վեբ-պորտալի առաջխաղացման և սպասարկման և էներգախնայողության տարածաշրջանային հարթակի գործունեության ուղղություններով (նիստերը կարող են տեղի ունենալ թե ENES- ի և թե այլ միջազգային հարթակներում):

Ծրագիրը համագործակցում է «Ռոսստանդարտի» -ի հետ՝ էներգախնայող սարքավորումների ստանդարտների մշակման և արդիականացման, ինչպես նաև փորձարկման մեթոդների արդիականացման և Ռոսստանդարտի լաբորատորիաների՝ ԵՏՄ երկրների փորձարկման լաբորատորիաների միասնական ցանցում ընդգրկման ուղղությամբ: Ռոսստանդարտի փորձագետները կներգրավվեն փորձարկման լաբորատորիաների անձնակազմի վերապատրաստման աշխատանքներում:

Ղազախստան

2017թ. հաջողությամբ ավարտվեց ՄԱԶԾ-ԳԷՀ-ի «էներգաարդյունավետ լուսավորության խթանումը Ղազախստանում» ծրագիրը: Ծրագրի շրջանակներում մշակվեցին բազմաթիվ ազգային ստանդարտներ, ներառյալ պետական գնումների համար էներգաարդյունավետության պահանջներ: Ղազախստանն այսօր էներգախնայող տեխնոլոգիաների լուսավորության խթանման առաջատարներից մեկն է և կարող է ծառայել որպես էներգախնայողության պետական քաղաքականության լավ օրինակ: Ահա մի քանի օրինակներ՝ շիկացման լամպերը հանվել են շրջանառությունից (2012-2014), ստեղծվել են լուսավորման սարքերի և լամպերի փորձարկման լաբորատորիաներ, ստեղծվել են բարենպաստ պայմաններ բարձարդյունավետ LED տեխնոլոգիայի զանգվածային ներդրման համար: Առաջիկա մի քանի տարիների ընթացքում Ղազախստանի մի շարք խոշոր քաղաքներում փողոցային լուսավորությունը կկազմակերպվի LED լամպերով: Փողոցային լուսավորության արդիականացմանն ուղղված մի շարք խոշոր ծրագրեր են նախատեսվում մասնավոր և միջազգային ֆինանսական հաստատություններից ներգրավված ներդրումների միջոցով:

Հաշվի առնելով էներգախնայող լուսավորության խթանման ծրագրի իրականացման դրական փորձը, պատրաստվել է ՄԱԶԾ-ԳԷՀ-ի «էներգախնայողության ստանդարտները, սարքերի և սարքավորումների վկայագրումը և պիտակավորումը Ղազախստանում» Ծրագիրը: Ծրագիրը կկենտրոնանա սառնարանների, տրանսֆորմատորների և էլեկտրական շարժիչների էներգաարդյունավետության ստանդարտների մշակման ուղղությամբ: Այդ ապրանքատեսակների համար առկա ներուժը իրագործելու և դրա՝ շուկայում առաջխաղացմանը նպաստելու նպատակով, ՄԱԶԾ-ԳԷՀ-ի Ղազախստանում իրականացվող ծրագիրը համագործակցելու է տարածաշրջանային ծրագրի հետ: Երկու ծրագրերի փորձագետները միասին կմշակեն ժամանակակից ԷԱՆՍ/ԲԷԱՍ-երը և կհամագործակցեն ազգային և տարածաշրջանային

մակարդակներում իրագործման հետ կապված հարցերի շուրջ: Տարածաշրջանային ծրագիրը կտրամադրի փորձագիտական աջակցություն և կապահովի ԵՏՄ-ի անդամ երկրների մասնագետների փոխ համագործակցությունը՝ ուղղված ստանդարտների և պահանջների ներդաշնակեցման հարցերին:

Բացի այդ, համատեղ աշխատանք կանցկացվի համապատասխանության գնահատման ենթակառուցվածքների մշակման ուղղությամբ: ԵՏՄ երկրներում փորձարկման օբյեկտների վերլուծությունը թույլ կտա Ղազախստանին նվազագույնի հասցնել փորձարկման լաբորատորիաների ստեղծման հետ կապված ծախսերը և օգտվել Ռուսաստանի Դաշնության և Բելառուսի լաբորատորիաների փորձից:

Ղազախստանում ԷԱ-ի հաջողված փորձի պատմությունները կներկայացվեն տարածաշրջանային միջոցառումների ժամանակ, և Ղազախստանի մասնագետները կներգրավվեն խորհրդատվական ծառայությունների տրամադրման աշխատանքներին ԵՏՄ-ի մասնագետների համար կազմակերպվող դասընթացների ընթացքում:

Բելառուս

Բելառուսը միշտ հանդիսացել է ԱՊՀ երկրների առաջատարներից մեկը էներգախնայողության ոլորտում: Ի տարբերություն այլ երկրների, հանրապետությունում պահպանվել և հաջողությամբ զարգացել է նախկին տեխնիկական կանոնակարգման պետական համակարգը: Վերջին տասնամյակի ընթացքում ստեղծվել կամ արդիականացվել են լուսավորության, սառնարանների, կենցաղային և ինժեներական սարքավորումների փորձարկման լաբորատորիաները, որոնք ֆինանսավորվում են պետական և միջազգային դոնորների կողմից: Որակի կառավարման և էներգաարդյունավետության համակարգը ապահովված է իր սեփական ստանդարտներով և մեթոդներով, ինչպես նաև եվրոպական կամ ռուսական առաջատար ստանդարտների հիման վրա մշակված ստանդարտներով: Էներգաարդյունավետության վերաբերյալ իրազեկման և պիտակավորման ուղղությամբ ընդունվել են ստանդարտներ, էներգախնայողության ցուցանիշների համապատասխանեցման հաստատման համար մշակվել են մեթոդներ էներգախնայող արտադրանքի համար սահմանված արժեքներով: Բյուջետային ոլորտի համար մշակվել են էներգախնայողության և էներգաարդյունավետության ցուցանիշների համակարգի ստանդարտ ծրագրեր:

Ներկայումս էներգախնայողական նոր տեխնոլոգիաների ի հայտ գալուն զուգընթաց, էներգաարդյունավետության ոլորտում առկա ստանդարտներն ու ստանդարտ լուծումները պետք է թարմացվեն, ինչպես նաև ներդաշնակեցվեն ԵՏՄ-ի երկրների կարգավորող շրջանակների հետ:

ՄԱԶԾ տարածաշրջանային ծրագրի շրջանակներում նախատեսվում է համագործակցել Բելառուսի Հանրապետության ստանդարտացման պետական կոմիտեի և ՄԱԶԾ-ԳԷՀ-ի «Բելառուսի փոքր և միջին քաղաքներում կանաչ քաղաքների պլանավորման աջակցության» ծրագրի հետ: ՄԱԶԾ-ԳԷՀ-ի այս ծրագրի ուշադրության կենտրոնում են գտնվում կանաչ քաղաքների զարգացման ծրագրերի ընդլայնումը և փորձնական նախաձեռնությունների իրականացումը՝ հատուկ ուշադրություն դարձնելով փողոցային լուսավորության և հանրային շենքերի էներգաարդյունավետության բարձրացմանը: Տարածաշրջանային ծրագրի հետ համագործակցությունը հնարավորություն կտա զարգացնել ԲԷԱՍ-ները լուսավորող սարքավորումների համար և ներդաշնակեցնել դրանք ոչ միայն Բելառուսում, այլև ԵՏՄ-ի այլ երկրներում կիրառման նպատակով: Բելառուսը կկարողանա օգտվել ԵՏՄ երկրներում քաղաքային ենթակառուցվածքների էներգաարդյունավետության (այդ թվում, փողոցային լուսավորության) բարելավման լավագույն փորձի կիրառման հաջողված օրինակներից: Բացի այդ, կբարելավվի փողոցային լուսավորության էներգաարդյունավետության մշտադիտարկման

մեթոդաբանությունը, ինչպես նաև ջերմոցային գազերի արտանետումների կրճատման մեթոդաբանությունը:

Տարածաշրջանային ծրագիրը կներգրավի Բելառուսից մասնագետների, որոնք կօգնեն այլ երկրներին անցկացնել մասնագետների մասնագիտական վերապատրաստում կամ խորհրդատվություն անցկացնել լաբորատոր փորձարկման, ստանդարտների մշակման և էներգախնայող արտադրանքի և համակարգերի որակի վերահսկման վերաբերյալ:

Շահառուների ներգրավվածությունը

ՄԱԶԾ-ի ծրագիրը կիրականացվի առանցքային ազգային գործընկերների ներգրավմամբ.

Հայաստանում ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն, ՀՀ բնապահպանության նախարարություն, Ստանդարտների ինստիտուտ, սպառողների իրավունքների պաշտպանության ՀԿ-ներ

Ղրղզստանում արդյունաբերության, էներգետիկայի և ընդերքի շահագործման պետական կոմիտե և Ղրղզստանի էկոնոմիկայի նախարարության Ստանդարտացման և չափագիտության կենտրոն (Ղրղզստան)

Բելառուսում՝ Ստանդարտացման պետական կոմիտե

Ղազախստանում՝ Ներդրումների և զարգացման նախարարություն

Ռուսաստանի Դաշնությունում էներգետիկայի նախարարություն, Տեխնիկական կարգավորման և չափագիտության դաշնային գործակալություն

Հարավ-Հարավ և եռանկյուն համագործակցություն (ՀՀՀ/ԵՀ)

Գործընկեր երկրների միջև համագործակցությունը կնպաստի ստանդարտների մշակման և կիրառման համար պատասխանատու հաստատությունների միջև համագործակցությանը, ներառյալ փորձարկման լաբորատորիաների, շուկայական վերահսկողության մեխանիզմները և շարունակական նորացմանը: ԷԱ-ի խթանման կարգավորիչ և կիրառման մեխանիզմները ավելի մեծ առաջընթաց են գրանցել Ռուսաստանում, Բելառուսում և մասամբ նաև Ղազախստանում: Տարածաշրջանային բաղադրիչը կնպաստի Հայաստանում և Ղրղզստանում կարգավորիչ մեխանիզմի ներդաշնակեցման առաջխաղացմանը և փորձագիտական հարթակի ստեղծմանը, որը կծառայի ոչ միայն ծրագրի ընթացքում, այլև ԵՏՄ-ի երկրների միջև շարունակական համագործակցության ապահովման համատեքստում:

Գիտելիքներ

Ծրագիրը հետևողականորեն կօգտագործի առկա միտումները, մասնագիտացված հաստատությունների, փորձարկման լաբորատորիաների փորձագիտական գիտելիքները, փորձագիտական հանրության ներգրավումը ՄԱԶԾ-ի ԷԱ գործընկեր երկրներում, այդ թվում ՄԱԶԾ կայքերի և գործընկերների կայքերի մշակման աշխատանքներում, սոցիալական ցանցերի գործիքների կիրառմամբ արդյունքների և ծրագրի իրականացման կարգավիճակի մասին թարմացված տվյալներ հաղորդելու համար: Միևնույն ժամանակ, Ծրագրի գիտելիքային արդյունքները, ինչպիսիք են՝ կանոնակարգող փաստաթղթերը, փորձարկման մեթոդաբանությունները և ծրագրի կողմից ստեղծված կրթական /վերապատրաստման և իրազեկման բարձրացմանն ուղղված նյութերը բաց և հասանելի կլինեն բոլոր շահագրգիռ կողմերի համար: Դրանից բացի, Ծրագիրը կապահովի, որ բոլոր տարածաշրջանային միջոցառումներն իրականացվեն բոլոր գործընկեր երկրների ներկայացուցիչների լիարժեք մասնակցությամբ,

հասարակական միջոցառումները լայնորեն լուսաբանվեն ՁԼՄ-ներով, որպեսզի շահագրգիռ կողմերը շարունակաբար թարմ տեղեկատվություն ստանան ծրագրի և դրանից քաղած դասերի վերաբերյալ:

Տեսանելիություն

Կառավարության գործընկերների, մասնավոր հատվածի և սպառողների իրավունքները ներկայացնող ՀԿ-ների, ՁԼՄ-ների, զարգացման այլ գործընկերների և լայն հասարակայնության շրջանում իրազեկության մակարդակի բարձրացման նպատակով մշակվելու է հաղորդակցման ռազմավարություն: ՄԱԶԾ-ն կօգտագործի տարբեր ավանդական և ոչ ավանդական կապի միջոցներ, ինչպիսիք են ՄԱԶԾ-ի կայքերը, սոցիալական ցանցերը, հեռուստատեսային հաղորդումները, տպագիր և առցանց լրատվամիջոցները, բլոգը, ծրագրի հաջողությունների վերաբերյալ տեղեկատվության տարածման նպատակով: Հաղորդակցման բովանդակությունը կձևավորվի տարածաշրջանային միջոցառումներից, ծրագրի հաշվետվություններից, փորձարկման լաբորատորիաների տեխնիկական հնարավորությունների, լուսանկարների բազայի, ծայնա-տեսանյութերի և այլնի միջոցով:

Դոնորների և իրականացնող գործակալության տեսանելիության ուղենիշները կպահպանվեն բոլոր հրապարակումներում և լուսաբանող նյութերում, և կհամաձայնեցվեն կողմերի միջև դրանց նախապատրաստման ընթացքում: Դոնորների և իրականացնող գործակալության կողմից կօգտագործվեն ծրագրի լոգոները և կպահպանվեն այլ բրենդային և տեսանելիության պահանջները՝ երկու կողմերի հաղորդակցության քաղաքականության հիման վրա:

Կայունություն և ընդլայնում

Ծրագրի միջամտության տրամաբանությունը ձևավորվում է ԵՏՄ երկրների զարգացման ռազմավարության և ԿԶՆ- ների գաղափարախոսության, ինչպես նաև երկրների էներգետիկ ոլորտի առաջնահերթությունների, Փարիզի Համաձայնագրի շրջանակներում ձևավորված ցածր ածխածնային զարգացման նպատակների ներքո: Ծրագիրը լիակատար աջակցություն է ստանում բոլոր պետական շահագրգիռ կողմերից և օժանդակվում է գիտելիքների ցանցերով, խորհրդատվություններով և բոլոր համապատասխան գործակալությունների կողմից տեխնիկական համագործակցությամբ: Դա, անկասկած, կնպաստի ծրագրի կայունությանը, ապահովելով կառավարության ուժեղ ներգրավվածությունը և կարգավորող դաշտի սահուն գործունեությունը:

Ազգային առաջնահերթությունների հետ մեկտեղ ծրագիրը կձևավորի ուժեղ տարածաշրջանային համագործակցություն՝ ներդաշնակեցված օրենսդրական դաշտի ներդրման միջոցով ԵՏՄ-ում էներգախնայողության խնդիրների լուծման համար համապատասխան թռիչքային զարգացում ապահովելու համար, իսկ տեխնոլոգիական փոխգործակցությունը և մասնագիտացված փորձարկման լաբորատորիաների ծախսարդյունավետ ցանցի և մասնավոր հատվածի հետ սերտ փոխ համագործակցության միջոցով կպահպանեն արտադրական և մանրածախ ոլորտներին համապատասխան ազդակների հաղորդման առավելությունները, այդպիսով ամրապնդելով ծրագրի արդյունքների կայունությունը:

Ռիսկերի կառավարում

Տեխնիկական և գործառնական ռիսկերը ներառում են գիտելիքների և հնտությունների բացակայության հետ կապված ռիսկերը և ԵՏՄ-ի երկրների միջև համագործակցության ոչ բավարար զարգացվածությունը: Կարգավորող համակարգի բարելավման ռիսկերը ներառում են ԷԱՆՍ -երում և ԲԷԱՍ-ներում ստանդարտների գործադրման թերությունների հետ կապված ռիսկերը, որոնք պայմանավորված են էներգակիրների ցածր գներով և շուկայի փոխակերպման դինամիկայի վերահսկման ուղղությամբ հսկողության մեխանիզմների բացակայությամբ: Այնուամենայնիվ, բոլոր գործընկեր երկրները, իրենց ազգային էներգետիկ և կլիմայական

քաղաքականություններում, գերակա են համարում էներգաարդյունավետության խնդիրները: Բացի դրանից, ԵՏՄ կարգավորումը ենթադրում է, որ շուկայական կանոնները պետք է ներդաշնակեցվեն բոլոր գործընկեր երկրներում, որպեսզի ձևավորվեն համընդհանուր կանոններ, այդ թվում՝ էներգախնայող սարքերի վերաբերյալ:

Ծրագրի սոցիալական և բնապահպանական ռիսկերը փոքր են և ամփոփված են [Հավելված 2-ում](#): Ինստիտուցիոնալ ռիսկերը կկրճատվեն հաղորդակցության պաշտոնական և ոչ պաշտոնական ուղիների ձևավորման միջոցով, ներառյալ փորձագիտական հարթակի, փորձարկման լաբորատորիաների ցանցի ձևավորման, սեմինարների և ուսուցողական դասընթացների միջոցով:


Այս ծրագրի ռիսկի վարկանիշը ներկայացված է [Հավելված 3-](#) ում՝ ՄԱԶԾ-ի հայտնաբերված ռիսկերի ցանկում: Այս ծրագրի ընդհանուր ռիսկի վարկանիշը ցածր է: ՄԱԶԾ-ի ստանդարտ պահանջների համաձայն, Ծրագրի Առաջադրանքի ղեկավարը եռամսյակային պարբերականությամբ կիրականացնի ռիսկերի մշտադիտարկում և ռիսկերի կարգավիճակի վերաբերյալ հաշվետվություն կներկայացնի ՄԱԶԾ-ի ԵԳ-եր: ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի Հայաստանի գրասենյակը կզետեղի ընթացքի վերաբերյալ տվյալները ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի ռիսկերի գրանցման ԱՏԼԱՍ համակարգում՝ ծրագրի տարածաշրջանային և ազգային բաղադրիչների ներքո: Ռիսկերը կդիտարկվեն որպես ծայրահեղ, երբ դրանց ազդեցությունը և հավանականությունը մեծ են (այսինքն, երբ ազդեցությունը կլինեն բարձր (օրինակ՝ ազդեցությունը գնահատված կլինի 5, իսկ հավանականությունը՝ 1,2,3,4, 5 կամ երբ ազդեցությունը գնահատված կլինի 4, իսկ հավանականությունը գնահատված կլինի 3 կամ ավելի բարձր): Ծրագրի իրականացման տարեկան զեկույցում կներկայացվեն նաև ծայրահեղ ռիսկերի գծով ղեկավարության պատասխանները:

IV. ԾՐԱԳՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ծրագիրը կիրականացվի ՄԱԶԾ-ի կողմից ՈՒԻԵ մեթոդաբանությամբ: Հայաստանում ՄԱԿ-ի Զարգացման Ծրագիրը, որպես Ծրագրի ղեկավարող երկիր, կապահովի ծրագրի տարածաշրջանային հաշվետվողականությունը, թափանցիկությունը, արդյունավետությունը և նպատակայնությունը, իսկ ՄԱԶԾ-ի Ղրղզստանի գրասենյակը կապահովի հաշվետվողականությունը, թափանցիկությունը, արդյունավետությունը և նպատակայնությունը՝ ծրագրի ազգային բաղադրիչի իրականացման համար: ՄԱԶԾ-ն, համաձայն ՄԱԶԾ-ի կորպորատիվ կանոնակարգերի, պատասխանատու կլինի հետևյալի համար. (i) Ծրագրի անձնակազմի ընտրություն և/կամ հավաքագրում; (ii) ապրանքների և ծառայությունների ձեռքբերում. (iii) ֆինանսական ծառայություններ:

Ֆինանսական վերահսկողությունը, ներառյալ ծախսերի հաստատումը և անկախ աուդիտները, մշտադիտարկումը և առաջընթացի արդյունքները, նույնպես կապահովվեն ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի երկրի գրասենյակների կողմից: ՄԱԶԾ հայաստանյան ԵԳ-ը կապահովի Ծրագրի վերջնական գնահատումը:

Ծրագրի կազմակերպական կառուցվածքը



Ծրագրի ղեկավարման ընդհանուր վերահսկողության նպատակով կստեղծվի Ծրագրի համակարգման կոմիտե (ԾՀԿ): ԾՀԿ-ն ներկայացված կլինի Ռուսաստանի Դաշնության Էներգետիկայի նախարարության, Բելառուսի Հանրապետության ստանդարտացման պետական կոմիտեի, Ղազախստանի Հանրապետության ներդրումների և զարգացման նախարարության, Հայաստանի Հանրապետության Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության, Ղրղզստանի Հանրապետության Արդյունաբերության, Էներգետիկայի և ստորերկրյա շահագործման պետական կոմիտեի, ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի երկրի գրասենյակների կողմից (տես [Հավելված 4](#)):

ԾՀԿ նիստերը տեղի կունենան ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան տարին մեկ անգամ: ԾՀԿ-ն կմշտադիտարկի ծրագրի առաջընթացը, կապահովի քաղաքական վերահսկողություն և կառաջարկի ընդհանուր խորհրդատվություն ծրագրի իրականացման ընթացքում, ինչը թույլ կտա ապահովել ծրագրի համապատասխանությունն ազգային զարգացման առաջնահերթություններին:

Ծրագրի երաշխավորումը Ծրագրի խորհրդի յուրաքանչյուր անդամի պատասխանատվություն է, սակայն այդ դերը կարող է պատվիրակվել: Ծրագրի երաշխավորման դերն օժանդակում է Ծրագրի խորհրդին, իրականացնելով ծրագրի օբյեկտիվ և անկախ վերահսկման և մոնիտորինգի գործառույթները: Այս դերն ապահովում է, որ ծրագրի կառավարման փուլանիշները կարգավորվեն և ավարտի հասցվեն: Ծրագրի երաշխավորումը պետք է անկախ լինի Ծրագրի կառավարչից, այսպիսով, Ծրագրի խորհուրդը չի կարող պատվիրակել երաշխավորման իր որևէ գործառույթ Ծրագրի կառավարչին: Այսպիսով, այս դերը ստանձնում են ՄԱԶԾ տարածաշրջանային գրասենյակը (Նյու-Յորք):

ՄԱԶԾ-ի հայաստանյան գրասենյակի կայուն աճի և դիմակայունության պորտֆելի վերլուծաբանը և Շրջակա միջավայրի և էներգետիկայի ծրագրերի վերլուծաբանը Ղրղզստանում կապահովեն ընդհանուր ծրագրի իրականացման հավաստիացումը, ներառյալ, անհրաժեշտության դեպքում այլ ծրագրային աջակցություն:

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակը կստեղծի տարածաշրջանային ծրագրի կառավարման թիմ, որը կապահովի նախատեսված տարածաշրջանային և ազգային բաղադրիչի հետ կապված գործողությունների իրականացումը և միջանկյալ արդյունքների ձեռքբերումը:

Տարածաշրջանային ծրագրի և Հայաստանի ՄԱԶԾ-ի գրասենյակի բաղադրիչների ամենօրյա իրականացումը կգործադրվի ըստ պատշաճի կազմակերպված ՄԱԶԾ-ի Կլիմայի փոփոխության ծրագրային գրասենյակի կողմից, որը կհամակարգվի և տեղակայված կլինի ՀՀ բնապահպանության նախարարության տարածքում (գրասենյակային տարածքը, կապի միջոցները և այլ կոմունալ ծառայությունները կհանդիսանան ՀՀ կառավարության կողմից բնաիրային ներդրման մի մաս), նախատեսված ծրագրի կառավարման կառուցվածքի գծապատկերային ներկայացման համար տես՝ Նկար 1:

Կլիմայի փոփոխության ծրագրի համակարգողին անհրաժեշտ կառավարման և տեխնիկական օժանդակություն ապահովելու համար ծրագրի շրջանակներում լրիվ զբաղվածությամբ կներգրավվի ծրագրի առաջադրանքի ղեկավար՝ տեխնիկական փորձագետ: Առաջադրանքների ղեկավարը ամբողջությամբ պատասխանատու է լինելու ծրագրի անմիջական իրականացման և ծրագրային բոլոր գործողությունների համակարգման համար: Նա իրավունք ունի իրագործել պլանավորված գործողությունները, ՄԱԶԾ-ի և ԾՀԽ-ի կողմից հաստատված տարեկան աշխատանքային պլանի համաձայն: Ծրագրի իրականացման համար կձևավորվի և կհավաքագրվի ծրագրի թիմ: Ծրագրի թիմը կկառավարվի Առաջադրանքի ղեկավարի կողմից, ով հաշվետու կլինի Ծրագրի համակարգողին և ՄԱԶԾ-ին՝ իրականացվող գործողությունների պլանավորման, որակով և ժամանակին իրականացման և արդյունավետության, ինչպես նաև միջոցների ճիշտ օգտագործման համար: Առաջադրանքի ղեկավարի աշխատանքի ընդունումը կիրականացվի ՄԱԶԾ կողմից՝ համաձայն ՄԱԶԾ ընթացակարգերի: Ծրագրի աշխատանքները հաջողությամբ իրականացնելու համար նախընտրելի և շահավետ է օգտագործել գործընկեր երկրներում իրականացված ՄԱԶԾ-ԳԷՀ-ի ծրագրերի շրջանակներում ձևավորված, վերապատրաստված և կայունացած կուտակված կարողությունները, այդ թվում՝ մարդկային ռեսուրսները, փորձը և տեղեկատվությունը: Առաջադրանքների ղեկավարը աջակցություն կստանա միջազգային տեխնիկական խորհրդատուի կողմից: Միջազգային տեխնիկական խորհրդատուն պետք է ունենա ԵՏՄ երկրներում իրականացված ՄԱԶԾ-ԳԷՀ ծրագրերի գծով փորձառություն: Ծրագրի կառավարման թիմը կօժանդակի միջազգային և ազգային խորհրդատուների հավաքագրմանը, այդ թվում, թեկնածուների որոնման ընտրության, ՏԱ-ների նախապատրաստման և վերահսկման գործընթացում, նախագծի համակարգման, այդ թվում, ազգային իրականացնող գործակալության հետ կանոնավոր հանդիպումների կազմակերպման, ֆինանսական կառավարման և հաշվետվողականության, վճարումների տրամադրման, ֆինանսական հատկացումների և հաշվետվությունների կազմման վերաբերյալ անձնակազմի վերապատրաստման և ֆինանսական հաշվետվությունների ամբողջականության և ժամանակին

ապահովման, տեխնիկական հաշվետվությունների, ներառյալ առաջընթացի հաշվետվությունների պատրաստման, մշտադիտարկման և գնահատման, վերապատրաստումների/աշխատաժողովների կազմակերպման գործողություններ և այլ առաջադրանքներ:

Համապատասխան տարածաշրջանային գործողությունները ենթակապալառության կարգով պետք է հանձնարարվեն և իրականացվեն համապատասխան տարածաշրջանային կազմակերպությունների կողմից, որոնք ունեն համապատասխան փորձ և բավարար ժամանակ, որը կարող են գործադրել ըստ փոխադարձ համաձայնեցված պայմանների: Տարածաշրջանային այն կազմակերպությունները, որոնք համապատասխան տարածաշրջանային գործողությունների առումով ունեն համեմատական առավելություն, կընտրվեն որպես այդ գործողությունների իրականացման ենթակապալառուներ: Նման հնարավոր համեմատական առավելությունների որոշման մեխանիզմներից մեկն է բաց միջազգային մրցույթի կամ սահմանափակ միջազգային մրցույթի միջոցով գնման գործընթաց կազմակերպումը, ըստ ՄԱԶԾ-ի ծրագրային և գործնական քաղաքականությունների և ընթացակարգերի:

V. Ծրագրի տրամաբանական արդյունքների շրջանակ

<p>Արդյունքների ցուցանիշները, ինչպես նշված են Գլոբալ/Տարածաշրջանային Արդյունքների և Ռեսուրսների Շրջանակներում, ներառյալ բազային և թիրախային ցուցանիշները՝ Ներառական և կայուն լուծումներ, որոնք ուղղված են էներգիայի օգտագործման արդյունավետության մեծացման և ժամանակակից էներգիայի (հատկապես ցանցային աղբյուրներից դուրս գտնվող վերականգնվող էներգիայի աղբյուրների) համընդհանուր հասանելիության ապահովմանը</p>
<p>Կիրառելի Արդյունք(ներ) ըստ ՄԱԶԾ ռազմավարական պլանի՝ 1.5. Ներառական և կայուն լուծումներ, որոնք ուղղված են էներգիայի օգտագործման արդյունավետության մեծացման և ժամանակակից էներգիայի (հատկապես ցանցային աղբյուրներից դուրս գտնվող վերականգնվող էներգիայի աղբյուրների) համընդհանուր հասանելիության ապահովմանը</p>
<p>Ծրագրի անվանումը և Ծրագրի համարը ԱՏԼԱՍ համակարգում «Եվրասիական տնտեսական միության երկրներում էներգաարդյունավետության խթանման կարգավորող շրջանակ»</p> <p>Ծրագրի ID: 00102117; Շնորհման ID: 00104290</p>

Ծրագրի նպատակը/բաղադրիչները/ արդյունքները	Արդյունքների նպատակները և ցուցանիշները	Բազային	Միջնաժամկետ նպատակ	Վերջնական նպատակ	Ենթադրություն
<p>Ծրագրի նպատակը. Լուսավորության, կենցաղային տեխնիկայի և շինարարական ինժեներական սարքավորումների էներգիայի սպառման նվազեցում՝ էներգաարդյունավետության ժամանակակից ստանդարտների ներդրմամբ</p>	<p>Ծրագրով նախանշված երկրներում լուսավորության, կենցաղային տեխնիկայի և շինարարական տեխնիկայի միջոցով էներգիայի սպառման նվազեցում (Ծրագրի երկրներ):</p>	<p>Ծրագրի երկրներում լուսավորության, կենցաղային տեխնիկայի և ինժեներական սարքավորումների միջոցով սպառվում է 50 մլրդ կՎտժ էլեկտրաէներգիա</p>	<p>Էներգախնայողության հասնելու համար քանակական թիրախներ չեն սահմանվել:</p>	<p>Հասնել էներգախնայողության 20% ներուժի իրագործման, որը կազմում է 3.1 մլրդ կՎտժ / տարի Ծրագրի ավարտից հետո՝ շուկայի էներգաարդյունավետության պահանջների փոփոխության միջոցով:</p>	<p>«Բազային» էլեկտրաէներգիայի սպառումը գնահատվում է շուկայի չափի վերաբերյալ տեղեկատվության և օգտագործված սարքերի և սարքավորումների տեխնիկական բնութագրերի հիման վրա : Ծրագրի երկրներում «բազային» սպառման տվյալների և էներգախնայողության ներուժի սահմանումը կկատարվի ծրագրի իրականացման առաջին տարվա ընթացքում:</p>

Ծրագրի նպատակը/բաղադրիչները/ արդյունքները	Արդյունքների նպատակները և ցուցանիշները	Բազային	Միջնաժամկետ նպատակ	Վերջնական նպատակ	Ենթադրություն
	Ծրագրի երկրներում լուսավորության, կենցաղային տեխնիկայի և շենքերի հնժեներական սարքավորումների միջոցով գոյացող ՋԳ արտանետումների նվազեցում:	Ծրագրի երկրներում լուսավորության, կենցաղային տեխնիկայի և հնժեներական սարքավորումների միջոցով էլեկտրաէներգիայի սպառման արդյունքում տարեկան գոյանում է 27.5 մլն տոննա CO ₂ արտանետում:	Էներգախնայողությամբ հասնելու համար քանակական թիրախներ չեն սահմանվել:	Հասնել տարեկան 1.7 մլն տոննա CO ₂ արտանետումների կրճատման Ծրագրի ավարտից հետո՝ շուկայի էներգախնայողության պահանջների վրա անմիջական ազդեցության միջոցով:	ՋԳ-ի բազային և թիրախային ցուցանիշները հիմնված են Ծրագրի երկրներում էլեկտրաէներգիայի արտադրության արդյունքում ՋԳ արտանետումների միջին գնահատականի օգտագործման վրա: Ծրագրի առաջին տարվա ընթացքում թարմացվելու են «բազային» արտանետումների տվյալները և ՋԳ արտանետումների նվազեցման ներուժը Ծրագրի երկրներում:
	Լուսավորման համակարգերի, կենցաղային տեխնիկայի և շենքերի հնժեներական սարքավորումների էներգաարդյունավետությունը բազային տվյալների համեմատությամբ:	Ծրագրի առաջին տարվա ընթացքում որոշվում են լուսավորման համակարգերի, կենցաղային տեխնիկայի և շենքերի հնժեներական սարքավորումների էներգաարդյունավետության «բազային» տվյալները:	Սահմանված է Ծրագրով նախատեսված սարքերի և սարքավորումների տեսակների 50% -ի էներգաարդյունավետության մակարդակը:	Ծրագրով նախատեսված սարքերի և սարքավորումների առնվազն 50% -ի և Ծրագրի շրջանակներում շուկայում ներկայացված երկրներում կգործեն ԷԱՆՍ- ով սահմանված պարամետրերը:	Ծրագրի ավարտից հետո միասնական ԷԱՆՍ -երի բացակայության դեպքում էներգախնայողության մակարդակի գնահատումը կկատարվի էներգաարդյունավետության առաջարկվող կամ ընդունված ազգային պահանջների հիման վրա:
Բաղադրիչ 1: Լուսավորության, կենցաղային տեխնիկայի և շենքերի հնժեներական սարքավորումների էներգաարդյունավետությ	ԷԱՆՍ և ԲԷԱՍ-եր՝ այն սարքերի և սարքավորումների ցանկի համար, որոնք ապահովում են «բազային»	ԵՏՄ-ի որոշ երկրներում ԷԱՆՍ/ԲԷԱՍ-ները սահմանված են ազգային մակարդակով որոշակի տեսակի տեխնիկայի և	Մշակված և առաջարկված են ԷԱՆՍ և ԲԷԱՍ-եր՝ այն սարքերի և սարքավորումների ցանկի համար, որոնք	ԷԱՆՍ /ԲԷԱՍ մշակվել և համաձայնեցվել (ընդունվել) են ազգային մակարդակում այն սարքերի և սարքավորումների	ԷԱՆՍ -ի՝ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի տեսքով միջնաժամկետ հեռանկարում ընդունման դեպքում ներկայիս նպատակը կկենտրոնանա ազգային ԲԷԱՍ-

Ծրագրի նպատակը/բաղադրիչները/ արդյունքները	Արդյունքների նպատակները և ցուցանիշները	Բազային	Միջնաժամկետ նպատակ	Վերջնական նպատակ	Ենթադրություն
<p>ան վերաբերյալ ժամանակակից չափորոշիչների մշակում և ներդրում:</p> <p>Արդյունք. ԵՏՄ երկրներում էներգաարդյունավետ սարքավորումների շուկայի փոխակերպումը և պահանջարկի բարձրացում:</p>	<p>Էներգիայի սպառման առնվազն 30% -ը:</p>	<p>սարքավորումների համար: Գործող ԷԱՆՍ / ԲԷԱՍ - ները չեն ներդաշնակեցված ԵՏՄ-ի մակարդակով՝ տեխնիկական կանոնակարգերի կամ միջպետական չափանիշների տեսքով:</p>	<p>ապահովում են «բազային» էներգիայի սպառման առնվազն 20% -ը:</p>	<p>ցանկի համար, որոնք ապահովում են «բազային» էներգիայի սպառման առնվազն 30% -ը:</p>	<p>ի շուրջ, ինչպես նաև ԷԱՆՍ-ի վերընթաց զարգացման, ինչպես նաև Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի միջոցով չկանոնակարգված սարքավորումների տեսակների համար ԷԱՆՍ-ի սահմանման շուրջ:</p>
	<p>Էներգաարդյունավետության ստանդարտների մշակման և Էներգաարդյունավետ տեխնոլոգիաների խթանման ուղղությամբ տարածաշրջանային փորձագիտական հարթակ, ԵՏՄ երկրների տարածքում:</p>	<p>ԵՏՄ-ի երկրների մակարդակով էներգաարդյունավետության ազգային պահանջների մշակումը համակարգված չէ, կան հակասություններ, ինչը խոչընդոտում է միասնական ստանդարտների ընդունումը և կասեցնում է ընդհանուր շուկայի զարգացումը:</p>	<p>ԵՏՄ երկրներից մասնագետների մասնակցությամբ ստեղծվում և գործում է փորձագիտական հարթակ: հարթակի փորձագետների մասնակցությամբ անցկացվել են 1 համաժողով և 2 սեմինար:</p>	<p>Հարթակի գործունեությունը թույլ է տվել շուկայի մասնակիցների ներկայացուցիչների միջև ապահովել երկխոսություն էներգախնայող ապրանքների վերաբերյալ և օգնել է ներդաշնակեցնել էներգախնայողության պահանջները: հարթակի փորձագետների մասնակցությամբ անցկացվել են 2 համաժողով և 4 սեմինար:</p>	<p>Հարթակի գործունեությունը՝ ուղղված պահանջների ներդաշնակեցմանը և սարքավորումների որոշ տեսակների խթանմանը, կարող է սահմանափակ լինել՝ կախված ԵՏՄ երկրների շուկայի մասնակիցների պահանջներից:</p>
	<p>Պահանջարկի խթանման և</p>	<p>Սպառողական համակարգված</p>	<p>Մշակվել և առաջարկվել է 5</p>	<p>Մշակված տեխնիկատնտեսական</p>	<p>Էլեկտրաէներգիայի ցածր գնով պայմանավորված, բարձր</p>

Ծրագրի նպատակը/բաղադրիչները/ արդյունքները	Արդյունքների նպատակները և ցուցանիշները	Բազային	Միջնաժամկետ նպատակ	Վերջնական նպատակ	Ենթադրություն
	բարձր էներգաարդյունավետություն ունեցող սարքավորումների ներդրման մեխանիզմներ:	գործառույթների և լրացուցիչ խթանների բացակայությունը թույլ չեն տալիս բարձրացնել էներգախնայող արտադրանքի ներդրման ծավալները:	տեխնիկատնտեսական ուսումնասիրության մոդել և բարձր էներգաարդյունավետություն ունեցող սարքավորումների արդյունավետության գնահատման 2 մեթոդ:	ուսումնասիրությունները և մեթոդները օգտագործվում են սպառողների կողմից և թույլ են տալիս բարձրացնել էներգախնայողության տեխնոլոգիաների ներդրման ծավալները:	էներգաարդյունավետություն ունեցող սարքավորումների ներդրման ծավալների ավելացումը կարող է տեղի ունենալ միայն էներգախնայող սարքավորումների որոշ տեսակների համար, և Ծրագրի ոչ բոլոր երկրներում:
<p>Բաղադրիչ 2: Փորձարկման լաբորատորիաների համակարգի ստեղծում և ցածր արդյունավետության սարքավորումներից շուկան պաշտպանելու միջոցառումների իրականացում:</p> <p>Արդյունք. Էներգաարդյունավետության վերահսկողության և արտադրանքի որակի վերաբերյալ տեղեկատվության տարածման արդյունավետ համակարգ:</p>	Էներգասպառող սարքերի և համակարգերի լիարժեք որակի վերահսկողության և էներգաարդյունավետության գործադրման պայմաններ: ԵՏՄ երկրներում փորձարկման կարողությունների ընդլայնում:	ԵՏՄ երկրներում սարքավորումների, սարքերի կամ համակարգերի էներգաարդյունավետության ստուգման լաբորատորիաների բացակայություն: Մի շարք փորձարկման լաբորատորիաներում ԷԱՆՍ /ԲԷԱՍ համապատասխանության հսկողության մասնագետների անբավարար որակավորում:	Ստեղծված կամ արդիականացված է էներգախնայող սարքերի կամ էլեկտրաէներգիայի սպառման համակարգերի տեսակների համար մեկ փորձարկման լաբորատորիա: Նախապատրաստված են ԵՏՄ երկրներում փորձարկման օբյեկտների / լաբորատորիաների համատեղ օգտագործման վերաբերյալ առաջարկություններ:	Առնվազն երկու փորձարկման լաբորատորիաներ են ստեղծված կամ արդիականացված էներգաարդյունավետության վերահսկողության համար: Շուկայի մասնակիցները օգտագործում են արտադրանքի որակի և էներգաարդյունավետության վերահսկման համար ԵՏՄ երկրներում փորձարկման լաբորատորիաների ցանց: Մշակվել է ԵՏՄ երկրներում փորձարկման օբյեկտների մշակման ընդհանուր պլան:	Ստեղծված կամ վերագինված լաբորատորիաների քանակը, ինչպես նաև դրանց մասնագիտացումը, որոշվելու են ծրագրի իրականացման շրջանի առաջին տարվա ընթացքում կատարված մանրամասն վերլուծության հիման վրա: Այս ցուցանիշը գնահատվում է ոչ թե ստեղծված կամ արդիականացված լաբորատորիաների քանակով, այլ նրանց հզորությունների ներուժով, որոնք թույլ կտան բավարարել ԵՏՄ երկրներում շուկայի մասնակիցների պահանջները:

Ծրագրի նպատակը/բաղադրիչները/ արդյունքները	Արդյունքների նպատակները և ցուցանիշները	Քաղաքին	Միջնաժամկետ նպատակ	Վերջնական նպատակ	Ենթադրություն
	<p>Ստանդարտները և փորձարկման և չափման մեթոդները անհրաժեշտ են ԷԱՆՍ/ ԲԷԱՍ- ի հետ համապատասխանության ապահովման համար:</p>	<p>Ստանդարտների լիարժեք փաթեթի և փորձարկման մեթոդաբանությունների բացակայություն էներգասպառող ապրանքների կամ էներգասպառող համակարգերի՝ ԷԱՆՍ /ԲԷԱՍ համապատասխանության փորձարկում իրականացման համար: Ներկա ստանդարտների և փորձարկման մեթոդների մի մասն ընդունվել են առանձին ԵՏՄ երկրներում ազգային մակարդակով և նույնպես չեն օգտագործվում Ծրագրի երկրներում:</p>	<p>Կատարված է գոյություն ունեցող ստանդարտների և մեթոդաբանությունների վերլուծություն և մշակված են դրանց արդիականացման վերաբերյալ առաջարկություններ, մշակված է ստանդարտների արդիականացման և բացակայող մեթոդների մշակման պլան:</p>	<p>Կազմակերպված են դասընթացներ փորձարկման լաբորատորիաների մասնագետների համար:</p> <p>Էներգախնայող արտադրանքի որոշակի խմբերի և/կամ համակարգերի համար ԷԱՆՍ /ԲԷԱՍ-երի համապատասխանության ապահովման ստանդարտների և փորձարկման մեթոդների փաթեթը մշակված է և օգտագործվում է ԵՏՄ երկրների մեծամասնության փորձարկման լաբորատորիաների կողմից:</p>	<p>Ցուցանիշը գնահատվում է ոչ թե մշակված մեթոդների քանակով, այլ էներգասպառող ապրանքների օգտագործման որոշակի խմբերի կամ էներգասպառող համակարգերի՝ ընդունված ԷԱՆՍ /ԲԷԱՍ-ների հետ համապատասխանեցման համար դրանց գործառնական կիրառությամբ:</p>
Սարքերի և սարքավորումների որակի վերահսկողության և		<p>Էներգասպառող ապրանքների հսկիչ գնումներ չեն իրականացվել, ինչպես</p>	<p>Հսկիչ գնումները կատարվում են և փորձարկվում են առավել</p>	<p>ԵՏՄ-ի անդամ երկրներում ազգային մակարդակով մշակված և ներկայացված են</p>	<p>Հսկիչ գնումների համար նախատեսված սարքավորումների տեսակները և դրանց քանակը որոշվելու են</p>

Ծրագրի նպատակը/բաղադրիչները/ արդյունքները	Արդյունքների նպատակները և ցուցանիշները	Բազային	Միջնաժամկետ նպատակ	Վերջնական նպատակ	Ենթադրություն
	Էներգաարդյունավետության փորձնական/պիլոտային ծրագիր:	Նաև չի իրականացվել էներգաարդյունավետության հայտարարված չափորոշիչների ստուգում: Ոչ բարեխիղճ մատակարարները կարող են առաջարկել ցածրորակ արտադրանք: Շուկայում անհավասար մրցակցություն կա, որը խանգարում է էներգաարդյունավետ արտադրանքի ներդրմանը:	զանգվածային էներգասպառման արտադրանքի նմուշները: Փորձարկման արդյունքները հրապարակվում են մասնագիտական հրապարակումներում և զանգվածային լրատվության միջոցներով:	Էներգասպառող ապրանքների գնումների և փորձարկման վերահսկողության պլանները:	Ծրագրի իրականացման ժամանակաշրջանի առաջին տարվա ընթացքում: Ցուցանիշը գնահատվում է ոչ թե փորձարկված արտադրանքի քանակով, այլ ԵՏՄ երկրներում շուկայի մասնակիցների վերաբերյալ օբյեկտիվ տեղեկատվության ազդեցության աստիճանի և ցածր որակի արտադրանքի նկատմամբ պահանջարկի կրճատմամբ:
<p>Բաղադրիչ 3: Սպառողների իրազեկության բարձրացում էներգախնայող տեխնոլոգիաների տարբերակների և օգուտների վերաբերյալ, ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման գնահատում:</p> <p>Արդյունք. Էներգախնայողության տեխնոլոգիաների ներդրման լավագույն</p>	Սպառողների իրազեկվածությունը լուսավորման սարքավորումների, կենցաղային տեխնիկայի և ինժեներական սարքավորումների էներգատարրության վերաբերյալ:	Ապրանքների էներգաարդյունավետության մասին տեղեկատվությունը ոչ հետևողական և ցածր ճանաչվածություն ունի սպառողների շրջանում: Սարքերի և սարքավորումների էներգաարդյունավետության մասին տեղեկատվությունը չի ազդում սպառողի ընտրության վրա:	Էներգաարդյունավետ կենսակերպի համատարածման էլեկտրոնային պորտալը գործում է բնակչության շրջանում և էներգախնայող տեխնոլոգիաների կիրառումը գործադրվում է ԵՏՄ երկրներում: Էներգախնայող սարքերի և սարքավորումների ընտրության ժամանակ	Էներգախնայող սարքերի և սարքավորումների ընտրության ժամանակ էներգաարդյունավետության վերաբերյալ տեղեկատվության ընթացքում, հասկանալու և մշակման ունակության վերաբերյալ հարցին սպառողների կողմից հաստատական պատասխանների քանակի 50% -ով ավելացում:	Սպառողների իրազեկվածության գնահատման համար նախատեսված սարքավորումների տեսակները և դրանց քանակը որոշվելու են Ծրագրի իրականացման ժամանակաշրջանի առաջին տարվա ընթացքում: Սպառողների իրազեկվածության վերաբերյալ տվյալները հավաքագրվում են հարցազրույցների և թիրախային խմբերի միջոցով Ծրագրի իրականացման ժամանակաշրջանի սկզբում, կեսին և վերջում:

Ծրագրի նպատակը/բաղադրիչները/ արդյունքները	Արդյունքների նպատակները և ցուցանիշները	Քաղաքին	Միջնաժամկետ նպատակ	Վերջնական նպատակ	Ենթադրություն
<p>փորձի մշտադիտարկումը կազմակերպված է և սպառողներին տրամադրվում է տեղեկատվություն:</p>			<p>Էներգաարդյունավետության վերաբերյալ տեղեկատվության ընթերցման, հասկանալու և մշակման ունակության վերաբերյալ հարցին սպառողների կողմից հաստատական պատասխանների քանակի 15% -ով ավելացում:</p>		
	<p>Քաղաքային ոլորտում էներգաարդյունավետության բարձրացման ծրագրերի մշակման մասնագետները օգտագործում են էներգախնայող սարքերի ներդրման լավագույն փորձը:</p>	<p>Սպառողները չեն օգտագործում իրականացված ծրագրերից քաղաք փորձը, քաղաքային ոլորտում էներգախնայող տեխնոլոգիաների ներդրման աստիճանի վերաբերյալ ցուցանիշների համակարգի բացակայություն:</p>	<p>Անցկացվում է Ծրագրի իրականացման մշտադիտարկում էներգախնայող սարքավորումների ներդրման համար (լուսավորություն և շենքերի ինժեներական սարքավորումներ): Առաջարկությունները մշակված են ԵՏՄ երկրներում դրանց վերարտադրման համար:</p>	<p>ԵՏՄ երկրներում մշակված և տարածվում է կոմունալ ոլորտի էներգաարդյունավետության ծրագրերի կատարում: Մշակվել և ներդրվել է քաղաքային ոլորտում էներգախնայող տեխնոլոգիաների ներդրման ցուցանիշների համակարգ:</p>	<p>Տեխնոլոգիաների ցանկը (կատարվում ընդգրկվելու համար) և ցուցանիշների համակարգը կարող են ճշգրտվել Ծրագրի իրականացման փուլում, հաշվի առնելով էներգաարդյունավետության և կայուն զարգացման ոլորտում քաղաքների վարկանիշների միջազգային փորձը:</p>

VI. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ և ԳՆԱՀԱՏՈՒՄ

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի ծրագրային քաղաքականության և ընթացակարգերի համաձայն, ծրագրի մշտադիտարկումն իրականացվելու է հետևյալ մշտադիտարկման և գնահատման պլանների միջոցով. *[Նշում. մշտադիտարկման և գնահատման պլանները պետք է հարմարեցվեն ծրագրի համարեքստին, ըստ անհրաժեշտության]*

Ծրագրային մոտեցման ցանկացած փոփոխություն կներկայացվի Ծրագրի Տարածաշրջանային Համակարգման Կոմիտեին, որը կգնահատի և կհաստատի առաջարկված ճշգրտումները: Վերջնական հաշվետվություն կպատրաստվի նախքան ծրագրի ավարտը և կպարունակի մանրամասներ Ծրագրի ձեռքբերումների և քաղած դասերի վերաբերյալ: Լրացուցիչ անկախ գնահատում կարող է իրականացվել, եթե ՄԱԶԾ-ն և ԳԷՀ-ը դա անհրաժեշտ համարեն: Ծրագրային աշխատանքների համաձայնեցված, համակարգված և ժամանակին իրականացման համար համապատասխան ազգային մեխանիզմների, տեղական ինքնակառավարման մարմինների, ֆինանսական հաստատությունների, մասնավոր հատվածի գործընկերների, տեղական ՀԿ-ների և սպառողական խմբերի միջև կձևավորվեն համապատասխան գործնական մեխանիզմներ, մշտադիտարկման և գնահատման (ՄԳ) ընթացակարգեր և իրականացման միջոցառումներ:

Մասնավորապես, կստեղծվի տարածաշրջանային ծրագրի իրականացման ՄԳ պլանհիմնական շահագրգիռ կողմերի հետ, և այդ պլանը հիմնված կլինի որոշակի հաջողված ցուցանիշների և ծրագրի նպատակների ստուգման միջոցների, ծրագրի նշանակության, ծրագրի արդյունքների վրա,

Ծրագրի որակի ապահովման հաշվետվությունը վերբեռնված է ՄԱԶԾ ներքին կայք էջում՝ <https://intranet.undp.org/sites/ARM/project/00102117/SitePages/ProjectProposalHomeV2.aspx> հղումով:

Մշտադիտարկման պլան

Մշտադիտարկման գործողություն	Նպատակը	Հաճախականությունը	Ակնկալվող գործողությունը	Գործընկերներ (եթե համատեղ է)	Ծախսեր (եթե կան)
Հետևում արդյունքների իրագործման առաջընթացին	Կհավաքագրվեն և կվերլուծվեն ՌԴ-ում արդյունքների ցուցանիշների համեմատ առաջընթացի տվյալները՝ համաձայնեցված արդյունքների իրագործման ուղղությամբ Ծրագրի առաջընթացը գնահատելու համար:	Եռամսյակային կամ յուրաքանչյուր ցուցանիշի համար պահանջվող պարբերականությամբ:	Նախատեսվածից դանդաղ առաջընթացը կդիտարկվի ծրագրի ղեկավարության կողմից:	ՄԱԶԾ գրասենյակներ գործընկեր երկրներում	Ծրագրի աշխատակազմ
Մշտադիտարկում և ռիսկերի կառավարում	Այնպիսի ռիսկերի բացահայտում, որոնք կարող են սպառնալ նախատեսված արդյունքների իրագործմանը: Ռիսկերի կառավարմանն ուղղված գործողությունների սահմանում և մշտադիտարկում, օգտագործելով ռիսկերի տեղեկամատյանը: Սա ներառում է մշտադիտարկման միջոցառումները և ծրագրերը, որոնք կարող են պահանջվել համաձայն ՄԱԶԾ-ի Սոցիալական և շրջակա միջավայրի ստանդարտների: Ֆինանսական ռիսկի կառավարման համար կանցկացվեն աուդիտներ՝ համաձայն ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի Աուդիտի քաղաքականության:	Եռամսյակային	Ծրագրի կառավարման միջոցով հայտնաբերված ռիսկերը կկառավարեն համապատասխան գործողությունների պլանավորման և իրականացման միջոցով: Ռիսկերի տեղեկամատյանը ակտիվորեն վարվում է՝ դիտարկված ռիսկերի և ձեռնարկված գործողությունների գրանցման նպատակով:	ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակ	Ծրագրի աշխատակազմ
Ուսուցում	Պարբերաբար կձևավորվեն գիտելիքների, լավագույն	Առնվազն տարեկան	Համապատասխան քաղաճ դասերը	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների	5,000 ԱՄՆ դոլար

	փորձի և քաղած դասերի բազաներ, ինչպես նաև ակտիվորեն կորոնվեն այլ ծրագրերի և գործընկերների ռեսուրսներում և կինտեգրվեն ծրագրում:		Ֆիքսվում են ծրագրի թիմի կողմից և օգտագործվում են իրագեկված կառավարման որոշումների կայացման գործընթացում:	և բնական պաշարների նախարարություն, Ղրղզստանի արդյունաբերության, էներգետիկայի և ընդերքի շահագործման պետական կոմիտե	
Տարեկան Ծրագրի որակի ապահովում	Ծրագրի որակը կգնահատվի ՄԱԶԾ-ի որակի չափորոշիչների համաձայն՝ ծրագրի ուժեղ և թույլ կողմերը բացահայտելու և ծրագրի բարելավման վերաբերյալ իրագեկված կառավարման որոշումների կայացման գործընթացում:	Տարեկան	Ուժեղ և թույլ կողմերը կվերանայվեն ծրագրի ղեկավարության կողմից և կօգտագործվեն Ծրագրի կատարողականի բարելավմանն ուղղված իրագեկված որոշումների կայացման նպատակով:		5,000 ԱՄՆ դոլար
Վերանայել և կատարել ընթացքի ճշգրտումներ:	Բոլոր մշտադիտարկման գործողություններից ստացված Տվյալների և ապացույցների ներքին դիտարկումներ՝ իրագեկված որոշումների կայացման նպատակով:	Առնվազն տարեկան	Կատարողականի վերաբերյալ տվյալները, ռիսկերը, քաղած դասերը և որակը կքննարկվեն ծրագրի խորհրդի կողմից և կօգտագործվեն ընթացքի ճշգրտումներ կատարելու համար:	Ծրագրի խորհուրդ	Ծրագրի աշխատակազմի գծով ծախսեր
Ծրագրի հաշվետվություն	Ծրագրի խորհրդին և հիմնական շահագրգիռ կողմերին կներկայացվի առաջընթացի հաշվետվություն՝ բաղկացած	Տարեկան, և ծրագրի վերջում (վերջնական զեկույց)		ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն,	Ծրագրի աշխատակազմի գծով ծախսեր

	<p>առաջընթացի վերաբերյալ տվյալներից, որոնք կպարունակեն ելակետային մակարդակներում կանխորոշված տարեկան նպատակային ցուցանիշների համեմատ ձեռք բերված արդյունքները, ծրագրի որակի գնահատման տարեկան ամփոփագիրը, վերանայված ռիսկերի տեղեկամատյանը՝ մեղմման միջոցառումներով, և տվյալ ժամանակահատվածի ընթացքում պատրաստված ցանկացած գնահատման կամ վերանայման հաշվետվություններ:</p>			<p>Ղրղզստանի արդյունաբերության, էներգետիկայի և ընդերքի շահագործման պետական կոմիտե, Բելառուսի ստանդարտացման պետական կոմիտե, Ղազախստանի ներդրումների և զարգացման նախարարություն</p>	<p>25,000 ԱՄՆ դոլար</p> <p>Անկախ ավարտական տեխնիկական գնահատում</p>
<p>Ծրագրի ակնարկ (Ծրագրի խորհուրդ)</p>	<p>Ծրագրի կառավարման մեխանիզմը (այսինքն, ծրագրի համակարգման կոմիտեն) կգնահատի նախանշված նպատակների համեմատ կատարված աշխատանքը: Ծրագրի ավարտական տարում Ծրագրի համակարգման կոմիտեն կանցկացնի ծրագրի ավարտական դիտարկում՝ քաղաժ դասերը ֆիքսելու և ծրագրի արդյունքների վերընթաց տարածման և սոցիալականացման հնարավորությունները քննարկելու, ինչպես նաև</p>	<p>Տարեկան</p>	<p>Որակի առնչությամբ յուրաքանչյուր խնդրահարույց հարց կամ ակնկալվածից ավելի դանդաղ առաջընթաց պետք է քննարկվի ծրագրի խորհրդի կողմից և համաձայնեցվեն ղեկավարության կողմից ձեռնարկվելիք գործողությունները՝ հայտնաբերված խնդիրների լուծման ուղղությամբ:</p>	<p>Խորհրդի անդամներ – երկրների գործընկեր նախարարությունների ներկայացուցիչներ</p>	<p>5,000 ԱՄՆ դոլար</p>

	քաղաժ դասերը համապատասխան լսարաններին ներկայացնելու նպատակով:				
--	---	--	--	--	--

Գնահատման պլան

Գնահատման անվանում	Գործընկերներ (եթե համատեղ է)	Ռազմավարական պլանի համապատասխան արդյունք	ՄԱԿՁԱԾ/ԵԾՓ (CPD) ձեռքբերում	Ավարտի պլանավորած ամիսն ու տարին	Գնահատման առանցքային շահագրգիռ կողմեր	Ֆինանսավորման արժեքն ու ազբյուրը
Ծրագրի ավարտական գնահատում		Ստեղծվել են արդյունավետ ինստիտուցիոնալ, օրենսդրական, քաղաքային շրջանակներ երկրի և տեղական կտրվածքով աղետների և կլիմայական ռիսկերի կառավարման միջոցառումների առաջընթացն ապահովելու համար	Մինչև 2020 թվականը. ներդրվել և կիրառվում են կայուն զարգացման սկզբունքները, շրջակա միջավայրի կայունության, դիմակայունության ձևավորման, կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմման, ինչպես նաև կանաչ տնտեսության լավագույն գործելակերպերը:	2019թ. օգոստոս	Խորհրդի անդամներ և ՄԱԶԾ գրասենյակներ երկրներում – երկրների գործընկեր նախարարությունների ներկայացուցիչներ	25,000 ԱՄՆ դոլար

VII. ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐՅԵՐ

Սույն ծրագրը մաս է ընդհանրական ծրագրային շրջանակի, որը նախատեսում է մի շարք առանձին փոխկապակցված միջոցառումների իրականացումը երկրի կտրվածքով: Երկրի կտրվածքով փոխկապակցված միջոցառումներին աջակցման ծառայություններ մատուցելու պարագայում այս փաստաթուղթն այն «ծրագրային փաստաթուղթ» գործիքն է, որը սահմանված է Հայաստանի կառավարության և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) միջև Հիմնական աջակցություն ստանդարտ համաձայնագրով (SBAA), որը կողմերը ստորագրել են 1995թ. մարտի 8-ին, և Ղրղզստանի կառավարության և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) միջև Հիմնական աջակցություն ստանդարտ համաձայնագրով (SBAA), որը կողմերը ստորագրել են 1992թ. սեպտեմբերի 14-ին:

Ծրագիրն իրականացվում է ՄԱԶԾ-ի կողմից (իրականացնող գործընկեր) համաձայն դրա ֆինանսական կանոնակարգերի, ընթացակարգերի, կանոնների, ընդունված ընթացքների, քանի դեռ դրանք չեն հակասում ՄԱԶԾ ֆինանսական կանոնակարգերի և կանոնների սկզբունքներին: Եթե իրականացնող գործընկերոջ ֆինանսական ղեկավարումը չի տրամադրում պահանջվող ուղղորդումը փողի լավագույն արժեքը, արդարությունը, ազնվությունը, թափանցիկությունը և արդյունքվետ միջազգային մրցակցությունն ապահովելու համար, կիրառվում է ՄԱԶԾ-ի ֆինանսական ղեկավարումը:

VIII. ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ՄԱԶԾ որպես Իրականացնող գործընկեր գործում է համաձայն ՄԱԿ-ի անվտանգության կառավարման համակարգի (UNSMS) քաղաքականությունների, ընթացակարգերի և ընդունված ընթացքների:

ՄԱԶԾ որպես Իրականացնող գործընկեր ձեռնարկում է ողջամիտ բոլոր ջանքերն ապահովելու համար, որ ծրագրի ֆոնդերից¹ և ոչ մեկը չի օգտագործվում ահաբեկչության հետ կապված անհատներին կամ կազմակերպություններին աջակցելու նպատակով և որ ՄԱԶԾ-ի կողմից վճարվող գումարների ստացողներից և ոչ մեկը չի գրանցված Անվտանգության խորհրդի կոմիտեի ցուցակում, ինչպես սահմանված է 1999թ. թիվ 1267 որոշմամբ: Ցուցակը հասանելի է http://www.un.org/sc/committees/1267/qa_sanctions_list.shtml հասցեով: Սույն դրույթը պետք է ներառվի այս ծրագրային փաստաթղթով պայմանավորված՝ ուժի մեջ մտած բոլոր ենթապայմանագրերում կամ ենթահամաձայնագրերում:

Սոցիալական և բնապահպանական կայունությունը պետք է ապահովվի ՄԱԶԾ Սոցիալական և բնապահպանական ստանդարտների (<http://www.undp.org/ses>) և համապատասխանաբար Հաշվետվայնության մեխանիզմի (<http://www.undp.org/secu-srm>) կիրառմամբ:

ՄԱԶԾ որպես Իրականացնող գործընկեր պետք է (ա) իրականացնի ծրագր(եր)ին առնչվող գործողություններ, որոնք համահունչ են ՄԱԶԾ սոցիալական և բնապահպանական ստանդարտներին, (բ) իրականացնի ծրագր(եր)ի համար մշակված կառավարման կամ մեղմման ցանկացած պլան այդ ստանդարտներին համապատասխան, և (գ) կառուցողական կերպով և ժամանակին արձագանքել բոլոր մտավախություններին և դժգոհություններին, որոնք առաջացել են Հաշվետվայնության մեխանիզմի միջոցով: ՄԱԶԾ-ն կձգտի ապահովել, որ համայնքները և ծրագրի այլ շահագրգիռ կողմերը տեղեկացված լինեն Հաշվետվայնության մեխանիզմի մասին և այն հասանելի լինի նրանց:

Ծրագրային փաստաթղթի բոլոր ստորագրողները համագործակցում են բարեխղճորեն ցանկացած գործողության շուրջ, որը ներառում է ծրագրի կամ ծրագրային շրջանակի ներքո ստանձնված

¹ Կիրառվում է ՄԱԶԾ-ի՝ Իրականացնող գործընկեր լինելու պարագայում:

պարտավորությունների կամ ՄԱԶԾ Սոցիալական և բնապահպանական ստանդարտներին համապատասխանության գնահատումը: Սա ներառում է ծրագրի տեղանքներին մուտք ապահովելը, համապատասխան աշխատակազմ, տեղեկություն և փաստաթղթեր տրամադրելը:

ՄԱԶԾ որպես Իրականացնող գործընկեր պահովում է, որ հետևյալ պարտավորությունները պարտադիր են կատարման համար յուրաքանչյուր պատասխանատու կողմի, ենթակապալառուի և ենթաստացողի կողմից.

Համաձայն Հիմնական աջակցություն ստանդարտ համաձայնագրի (SBAA) հոդված 3-ի յուրաքանչյուր պատասխանատու կողմի, ենթակապալառուի և ենթաստացողի, դրանց աշխատակազմի և գույքի, ինչպես նաև այդպիսի պատասխանատու կողմի, ենթակապալառուի և ենթաստացողի տրամադրության տակ գտնվող ՄԱԶԾ գույքի պահովության և անվտանգության համար պատասխանատվությունը ստանձնում են այդպիսի պատասխանատու կողմերը, ենթակապալառուները և ենթաստացողները: Այդ նպատակով յուրաքանչյուր պատասխանատու կողմը, ենթակապալառուն և ենթաստացողը պետք է.

- կազմի մի համապատասխան անվտանգության պլան և իրականացնի այդ անվտանգության պլանը՝ հաշվի առնելով այն երկրի անվտանգության իրավիճակը, որտեղ իրականացվում է ծրագիրը,
- ստանձնի Կատարող մարմնի անվտանգությանն առնչվող և անվտանգության պլանի իրականացման բոլոր ռիսկերն ու պարտավորությունները:

ՄԱԶԾ-ն իրավունք է վերապահում ստուգելու վերոհիշյալ պլանի առկայությունը և, անհրաժեշտության դեպքում, այդ պլանի մեջ փոփոխություններ մտցնելու առաջարկություններ անել: Սույնով նախատեսվող անվտանգության պլանի պատշաճ պահպանման և իրականացման ձախողումը այս համաձայնագրի համարվում է պատասխանատու կողմի, ենթակապալառուի և ենթաստացողի կողմից սույն ծրագրային փաստաթղթի ներքո ստանձնված պարտավորությունների խախտում:

Յուրաքանչյուր պատասխանատու կողմը, ենթակապալառուն և ենթաստացողը կատարում է պատշաճ քայլեր կանխելու համար ծրագիրը կամ ծրագրային շրջանակն իրականացնող կամ ՄԱԶԾ ֆոնդերն օգտագործող իրենց պատասխանատու կողմերի, ենթակապալառուների և ենթաստացողների կողմից ֆոնդերի չարաշահումը, խարդախությունը կամ կոռուպցիան: Այդ պահովում է, որ իր ֆինանսական կառավարումը, հակակոռուպցիոն և խարդախության դեմ գործելու քաղաքականությունները մշակված են և կիրարկվում են ՄԱԶԾ-ից կամ ՄԱԶԾ-ի միջոցով ստացված բոլոր տեսակների ֆինանսավորման համար:

Հետևյալ փաստաթղթերով սահմանված պահանջները, սույն ծրագրային փաստաթղթի ստորագրման ժամանակ ուժի մեջ մտած լինելու պարագայում, կիրառվում են յուրաքանչյուր պատասխանատու կողմի, ենթակապալառուի և ենթաստացողի նկատմամբ. ա) ՄԱԶԾ քաղաքականությունը խարդախության և կոռուպցիոն այլ գործողությունների վերաբերյալ, բ) ՄԱԶԾ աուդիտի և հետաքննությունների գրասենյակի հետաքննության ուղեցույցը: Յուրաքանչյուր պատասխանատու կողմը, ենթակապալառուն և ենթաստացողը համաձայնվում է վերոնշյալ փաստաթղթերով սահմանված պահանջներին, որոնք սույն ծրագրային փաստաթղթի անբաժան մաս են և հասանելի են առցանց www.undp.org հասցեով:

Այն դեպքում, երբ պահանջվում է հետաքննություն, ՄԱԶԾ իրականացնում է հետաքննություններ ՄԱԶԾ ծրագրերի կամ ծրագրային շրջանակի ցանկացած ասպեկտի վերաբերյալ: Յուրաքանչյուր պատասխանատու կողմը, ենթակապալառուն և ենթաստացողն ապահովում է իր ամբողջական համագործակցությունը, ներառյալ աշխատակազմի, համապատասխան փաստաթղթերի հասանելիությունը և մուտքը իր (պատասխանատու կողմի, ենթակապալառուի և ենթաստացողի) տարածք՝ այդ նպատակների համար ողջամիտ ժամանակում և ողջամիտ պայմաններով, ինչպես

կարող է պահանջվել հետաքննության նպատակների համար: Սույն պարտավորությունը կատարելու սահմանափակման առաջացման դեպքում ՄԱԶԾ խորհրդակցում է նրանց հետ լուցումը գտնելու համար:

Յուրաքանչյուր պատասխանատու կողմը, ենթակապալառուն և ենթաստացողն արագորեն տեղեկացնում են ՄԱԶԾ-ին որպես Իրականացնող գործընկեր ֆոնդերի անպատշաճ օգտագործման կամ խարդախության կամ կոռուպցիայի վստահելի մեղադրանքների դեպքերի ի հայտ գալու պարագայում՝ պատշաճ գաղտնիությամբ:

Եթե նրանք ստանում են տեղեկություն, որ որևէ ՄԱԶԾ ծրագիր կամ գործողություն, ամբողջությամբ կամ մասամբ, հայտնվել է հնարավոր խարդախության կամ կոռուպցիայի մեղադրանքով հետաքննության կենտրոնում, յուրաքանչյուր պատասխանատու կողմը, ենթակապալառուն և ենթաստացողը տեղեկացնում են ՄԱԶԾ մշտական ներկայացուցչին կամ գրասենյակի ղեկավարին, ով արագորեն տեղեկացնում է ՄԱԶԾ աուդիտի և հետաքննությունների գրասենյակին (OAI): Այսպիսով ապահովվում է երկրում ՄԱԶԾ ղեկավարին և OAI-ին հասանելի տեղեկության կանոնավոր թարմացում այդպիսի հետաքննության ընթացքի և դրան վերաբերող գործողությունների մասին:

ՄԱԶԾ-ն իրավունք ունի պատասխանատու կողմերից, ենթակապալառուներից և ենթաստացողներից հետ ստանալու նրանց տրամադրված և չարաշահած ցանցակաժ ֆոնդեր, ներառյալ խարդախության կամ կոռուպցիայի պատճառով կամ վճարված այլ՝ ծրագրային փաստաթղթով չնախատեսված չպարունակվող դրույթներով և պայմաններով: Այդ գումարի չափով կարող է պակասեցվել պատասխանատու կողմին, ենթակապալառուին և ենթաստացողին տրամադրվելիք ցանկացած վճարումը: Այդ գումարի վերականգնումը ՄԱԶԾ կողմից չպետք է նվազեցնի կամ ձախողի որևէ պատասխանատու կողմի, ենթակապալառուի և ենթաստացողի պարտավորությունները սույն ծրագրային փաստաթղթի ներքո:

Եթե այդպիսի ֆոնդերը չեն վերադարձվել ՄԱԶԾ-ին, պատասխանատու կողմերը, ենթակապալառուները և ենթաստացողները համաձայնվում են, որ ՄԱԶԾ-ի դնորները (ներառյալ կառավարությունը), որոնց ֆինանսավորումը աղբյուր է, ամբողջությամբ կամ մասամբ, սույն ծրագրային փաստաթղթի ներքո իրականացվող գործողությունների համար տրամադրված ֆոնդերի, կարող են փորձել աջակցել այդպիսի պատասխանատու կողմին, ենթակապալառուին և ենթաստացողին վերականգնելու ցանկացած ֆոնդեր, որոնք սահմանվել են ՄԱԶԾ-ի կողմից որպես չարաշահած, ներառյալ խարդախության կամ կոռուպցիայի պատճառով կամ վճարված այլ՝ ծրագրային փաստաթղթով չնախատեսված չպարունակվող դրույթներով և պայմաններով:

Նշում. «Ծրագրային փաստաթուղթ» եզրույթը, ինչպես օգտագործված է սույն դրույթում, դիտարկվում է որպես սույն ծրագրային փաստաթղթի ցանկացած, այդ թվում՝ պատասխանատու կողմերի, ենթակապալառուների և ենթաստացողների հետ ածանցյալ համաձայնագրում ներառման ենթակա:

Պատասխանատու կողմերի, ենթակապալառուների և ենթաստացողների կողմից սույն ծրագրային փաստաթղթի կապակցությամբ թողարկված յուրաքանչյուր պայմանագիրը պետք է ներառի դրույթ, որով սահմանվում է, որ և ոչ մեկ վարձ, տուրք, վերադարձվող գումար, նվեր, միջնորդավճար կամ այլ վճար, բացի [ծրագրային] առաջարկում ներառվածներից, չպետք է տալ, ստանալ կամ խոստանալ, կապված ընտրության գործընթացի հետ կամ պայմանագրի իրականացման մեջ, և որ նրանց կողմից ֆոնդեր ստացողները պետք է համագործակցեն բոլոր հետաքննություններն ու վճարումներից հետո աուդիտներն իրականացնողների հետ:

Եթե ՄԱԶԾ դիմում է երկրի պատկան մարմիններին՝ ծրագրին կամ ծրագրային շրջանակին վերաբերող ցանկացած ենթադրվող վնասատու գործողության կապակցությամբ համապատասխան իրավական գործողություն իրականացնելու նպատակով, կառավարությունը ապահովում է, որ երկրի պատկան բոլոր մարմիններն ակտիվորեն հետաքննեն դրանք և ձեռնարկեն համապատասխան իրավական գործողություններ բոլոր այդ անհատների/անձանց դեմ, որոնց

մասին հայտնաբերվում է, որ նրանք մասնակցել են վնասատու գործողություններին՝ ֆոնդերը վերականգնելու և դրանք ՄԱԶԾ-ին վերադարձնելու նպատակով:

Յուրաքանչյուր պատասխանատու կողմը, ենթակապալառուն և ենթաստացողն ապահովում է, որ «Ռիսկի կառավարում» անվանումով սույն բաժնում ներկայացված նրա բոլոր պարտավորություններն հանձնվում են նրա ենթակապալառուներին և ենթաստացողներին, և որ «Ռիսկի կառավարման ստանդարտ դրույթներ» անվանումով սույն բաժնի բոլոր դրույթները համարժեքորեն արտացոլված են սույն ծրագրային փաստաթղթով պայմանավորված նրա բոլոր ենթապայմանագրերում կամ ենթահամաձայնագրերում, հաշվի առնելով համապատասխան փոփոխությունները:

IX. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

1. Փոփոխության տեսության գծապատկեր
2. Սոցիալական և բնապահպանական գնահատում
3. Ռիսկերի վերլուծություն
4. Ծրագրի տարածաշրջանային ղեկավար կոմիտեի տեխնիկական առաջադրանքները
5. Հիմնական անձնակազմի տեխնիկական առաջադրանքները
6. Աջակցության նամակներ Հայաստանի և Ղազախստանի կառավարություններից

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՌԻՍԿԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

#	Նկարագրություն	Բացահայտման օր	Տեսակը	Ազդեցություն և հավանականություն	Հակազդող միջոցառումներ/կառավարման արձագանք
1.	Առաջարկվող իրավական և ինստիտուցիոնալ շրջանակը վերանայված/ընդունված չի կամ ընդունումը ժամանակին չի	հոկտեմբեր 2017	Գործառնական	I = 4 բարձր P = 3 միջին	ԵՄ երկրները էներգետիկ սեկտորում նախաձեռնել են բարեփոխումներ, որոնք ուղղված են էներգաարդյունավետության խթանմանը
2.	Հանրային հաստատությունների, մասնավոր հատվածի գործընկերների և ՀԿ-ների միջև գործողությունների և թերըմբռնումների համաժամանակացումը խաթարում է գործընկերային մոտեցումները և համագործակցության պայմանավորվածությունների իրականացումը	հոկտեմբեր 2017	Ֆինանսական Գործառնական	I = 3 միջին P = 3 միջին	Կստեղծվեն հաղորդակցման ալիքներ և կկազմակերպվեն տարածաշրջանային միջոցառումներ գործընկերների շահագրգիռ կողմերի համար՝ համաձայնեցնելով ժամանակացույցը և ճանապարհային քարտեզը: Կմշակվեն և կիրականացվեն գործողություններ հաղթանակ-հաղթանակ ձևաչափով, հնարավորինս օգտավետ բոլորի համար:
3.	Ցանցում ներգրավվող փորձարկման լաբորատորիաների կարողությունները չեն բավարարի գործընկերների ակնկալիքները համապատասխան ֆինանսական ռեսուրսների բացակայության պատճառով	հոկտեմբեր 2017	Գործառնական Ֆինանսական	I = 3 միջին P = 3 միջին	Հայաստանում և Ղրղզստանում ընտրված լաբորատորիաների տեխնիկական վերազինման համար վաղ ինքնագնահատման և ծրագրերի ներդրման պլանավորման հնարավորությունների շարք, ինչպես նաև Բելառուսի, Ղազախստանի և Ռուսաստանի Դաշնության գործող լաբորատորիաներում միասնական փորձարկման արձանագրությունների ներդրումը կնպաստի ցանցի անդամների միջև համագործակցությանը:

ՀԱՎԵԼՎԱԾ 4. Տարածաշրջանային ծրագրի համակարգող կոմիտեի տեխնիկական առաջադրանք

Տարածաշրջանային ծրագրի համակարգող կոմիտեն (ՏԾՀԿ) կազմավորվում է ծրագրի իրականացումը հսկելու և ռազմավարական խնդիրների վերաբերյալ որոշումներ կայացնելու նպատակով: ՏԾՀԿ անդամների առանցքային յուրահատուկ դերերը հատկորոշված են ստորև բերված սխեմայում:

- Գործադիր. խումբը նախագահելու համար ծրագրի համար պատասխանատու կառույցը ներկայացնող անհատ (ՄԱԶԾ երկրների գրասենյակների կառավարություն, առաջատարը՝ ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակ),
- Ավագ մատակարար. շահագրգիռ այն կողմերի շահերը ներկայացնող անհատ կամ խումբ, որոնք ծրագրին տրամադրում են ֆինանսավորում կամ տեխնիկական աջակցություն: Ավագ մատակարարի առաջնահերթ գործառույթը խորհրդում ծրագրի տեխնիկական իրականացվելիության վերաբերյալ ուղղորդումն է (Ռուսաստանի Դաշնության ներկայացուցիչներ (ենթակա է հաստատման) և ՄԱԶԾ Ղրղզստանի, Բելառուսի և Ղազախստանի գրասենյակների կառավարչությունը),
- Ավագ շահառու. ծրագրից վերջնականապես հիմնական շահողների շահերը ներկայացնող անհատ կամ անհատների խումբ: Ավագ շահառուի առաջնահերթ գործառույթը խորհրդում ծրագրի շահառուների տեսանկյունից ծրագրի արդյունքների իրականացումն ապահովելն է.
 - o ՀՀ էներգետիկ նախարարների և բնական պաշարների նախարարություն (ՄԱԶԾ Իրականացնող գործընկեր ՀՀ-ում),
 - o Ղրղզստանի Հանրապետության արդյունաբերության, էներգետիկայի և ընդերքի շահագործման պետական կոմիտե (ՄԱԶԾ Իրականացնող գործընկեր Ղրղզստանում),
 - o Բելառուսի Հանրապետության ստանդարտացման պետական կոմիտե
 - o Ղազախստանի Հանրապետության ներդրումների և զարգացման նախարարություն

Ծրագրի հաստատման պես առաջին նիստն անցկացնելու նպատակով ՏԾՀԿ անդամները հավաքվում են ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակի հրավերով:

1. Գործառույթներ

ՏԾՀԿ հիմնական գործառույթները ներառում են.

- Իրականացնել ընդհանրական առաջնորդում, ուղղորդում և կողմնորոշում արդյունքներին բարեհաջող հասնելու նպատակով, ինչպես նաև դրանց դերը տարածաշրջանային ծրագրի ձեռքբերումներում, ապահովելով, որ ծրագիրը մնում է ցանկացած հաստատված սահմանափակումների ներքո,
- Կատարել ռազմավարական որոշումներ, ներառյալ ծրագրի վերանայումների հաստատումը (օրինակ՝ փոփոխություններ ծրագրային փաստաթղթում),
- Լիազորել ծրագրային փաստաթղթից և համաձայնեցված աշխատանքային պլաններից ցանկացած խոշոր շեղում
- Հանդիպել տարեկան առնվազն մեկ անգամ (անձամբ կամ վիրտուալ կերպով) ծրագրի իրականացումը, կառավարման ռիսկերը և համապատասխան այլ հարցերը վերանայելու նպատակով,
- Տարեկան առաջընթացի հաշվետվության վերանայում,
- Ծրագրի ավարտական հաշվետվության վերանայում և առաջարկությունների կատարում ՄԱԶԾ հաստատման համար,
- Անդրադարձ ծրագրի խնդիրներին, ինչպես բարձրացված են ՄԱԶԾ-ի կողմից, և շարունակական գործողությունների վերաբերյալ առաջարկությունների կատարում,
- Ուղղորդել ծրագիրը նոր ռիսկերի առումով և համաձայնեցնել հնարավոր հակազդեցության միջոցառումները և կառավարչական գործողությունները հատուկ ռիսկերին անդրադառնալու նպատակով:

2. Ընթացակարգեր

ՏԾՀԿ գումարվում է ըստ անհրաժեշտության, սակայն տարեկան մեկ անգամից ոչ պակաս: ՏԾՀԿ անդամների առաջին նիստը կազմակերպվում է ծրագրի գրանցումից անմիջապես հետո: Հայաստանում ՄԱԶԾ ներկայացուցիչը գործում է որպես ՏԾՀԿ գործադիր քարտուղար:

Նա պատասխանատու է լինելու նաև ՏԾՀԿ նիստերի համար անհրաժեշտ նյութերի պատրաստման համար պատասխանատու անձ: Ապագայում գործադիր քարտուղարը նշանակվելու է ՏԾՀԿ կողմից ծրագրի աշխատակազմից՝ կառավարչական թիմից: Գործադիր քարտուղարը չի քվեարկում ՏԾՀԿ որոշումներ ընդունելիս, սակայն կատարում է խորհրդատվական գործառույթ: Գործադիր քարտուղարը համակարգում է ՏԾՀԿ անդամների հետ նիստերի վայրի և օրվա նշանակումը: ՏԾՀԿ յուրաքանչյուր անդամ պետք է նախապես տեղեկացված լինի նիստերի վայրի, օրվա և օրակարգի մասին:

ՏԾՀԿ նիստի քվորումը համարվում է ապահովված, եթե ներկա են ՏԾՀԿ անդամների առնվազն կեսը: Որոշ դեպքերում ՏԾՀԿ անդամները կարելի է հարցնել հեռախոսով կամ դիմել էլեկտրոնային փոստով ՏԾՀԿ նիստի օրակարգի առանցքային խնդիրների շուրջ:

Ծրագրի բոլոր գործընկերներն իրավունք ունեն ներկայացնել առաջարկել ՏԾՀԿ-ին:

ՏԾՀԿ նախագահը, ով ընտրվում է ՏԾՀԿ անդամներից առաջին նիստի ընթացքում, ստորագրում է ՏԾՀԿ նիստի արձանագրությունը:

ՏԾՀԿ որոշումներն ընդունվում են մասնակիցների համաձայնությամբ/կոնսենսուսով:

Անհրաժեշտության դեպքում ՏԾՀԿ կարող է հրավիրել և իր կազմում ընդգրկել ԵԱՏՄ երկրներից այլ կազմակերպությունների ներկայացուցիչներին (համաձայնությամբ):

Պետական այլ կառույցների, գործարար ընկերակցությունների, ՀԿ-ների կամ ծրագրի գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչներ կարող են հրավիրվել ՏԾՀԿ նիստերին առանց խորհրդատվական ձայնի իրավունքի: